

2326

744

U-16

258
21 OCT 2010

ՀԱՅԿ

ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ

ԾԱԺԿ

պ
ԿԱԶՄԵՑ Վ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԽՄԲԱԳՐԵՑ Ո. ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ)

ՀԵՌԱԿԱ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒԾ

258

15

744:374.4
U-20

Պետերատի տպարան
Գլավլ. № 7078 (բ)
Պատվ. № 1557
Տիրած 1000



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

§ 1. Գծագրական անհրաժեշտ պիտույքները, գործիքները
յեղվում են նախնական գծագրման համար,

Մասիս. — Գծագրության ժամանակ գործ են ածում յերկու տեսակ մատիտ՝ կոշտ (№ 3 կամ 2H) և փափուկ (№ 2 կամ HB): Կոշտ մատիտը հարկավոր է նախնական գծագրման համար, իսկ փափուկը վերջնական:


Գծերը քաշում են մատիտի սրած ծայրով քանոնի կողից ձախից դեպի աջ, թղթին թեթև քսելով, հակառակ դեպքում գիծը դժվար է ջնջվում և թղթի վրա հետքեր է թողնում:

Մատիտը պետք է թռնել մեջտեղից ուղղահայաց դրուժյամբ (քիչ թեքելով դեպի աջ) հենվելով յերկու աղատ մասների վրա: Մերթ ընդ մերթ մատիտի (ծայրը հարկավոր է սրել թղթի վրա:

Լեցիմ. — Լեցիմը պետք է լինի յերկու տեսակ՝ շատ փափուկ մատիտի («ՍԼՈՆ» — «ՉԱՅՉԻԿ») սժանդակ, ավելորդ գծերը ջնջելու և ընդհանրապես գծագրի վերջնական մաքրման համար — և ապակյա կամ պեմզայով ուտին («Լեոգոլ»), «տուշով գծված սխալ գծերը ջնջելու համար:

Թուղթ. — Թուղթը պետք է խիտ լինի: Ամենալավ թուղթը համարվում է անգլիական Վատման կամ գերմանական Վիլսման գործարանի «Հերկուլես» — վատմանը, ինչպես և Խորհրդային վատմանը, վորն ունի նույնպես լավ հատկություն: Թղթի հատկությունը վորոշելու համար հարկավոր է թղթի վրա մատիտով մի գիծ քաշել, հետո ջնջել, նույն տեղի վրա դարձյալ գծել, կրկին ջնջել և այդպես մի քանի անգամ: Հետո այդ ջնջված գծի տեղը տուշով գծել: Յիժե տուշը չի ծծվի, ուրեմն թուղթը պիտանի չէ գծելու համար:

34750



Տոււ.—Տոււը սե ներկէ և, վորով գծում են գծվածքը: Տոււը լինում է ջնջվող և ջնջվող, կոշտ՝ իբրև մի կտոր կամ լուծված սրվակների մեջ: Կոշտ կտորով տոււը կարելի չէ լուծել ցանկացած թանձրութեամբ ջրով լի բաժակի մեջ:


Գծագրերը ներկելու ժամանակ նպատակահարմար է ջնջվող տոււ գործածել: Գծագրի վորոշ մասերը ներկելու համար գրք են անում կարմիր և կապույտ տոււ (սրվակներով), վորոնց մեծ հաշտութեամբ կարելի չէ փոխարինել ջրաներկերով (կարմիր և լազուր):

Ներկեր.—Գծագրի վորոշ մասերը ներկվում են ջրաներկերով: Ջրաներկերով առհասարակ ներկվում են կարվածքային մասերը: Գծագրման համար ամենագործածականն են համարվում հետևյալ ներկերը՝ կարմիր, մոխրագույն սիյնա, սեպիա, գումրիգուտ (կամ լեմոնի խրոմ), նետրադիտին, բեռլինի լազուր: Ներկերը կարող են լինել տափակ կտորներով կամ տղուրիկների մեջ:

Գծագրման համար ավելի լավ է ձեռք բերել այսպես կոչված «տեխնիկական» տափակ կտորներով ներկեր: Տափակ ներկերը, ինչպես և տոււը, կարելի չէ լուծել ջրի մեջ, բայց ավելի լավ է թաց վրձինով քսել ներկին և այնուհետև վրձինի վրայի ներկը լուծել ջրի մեջ: Ներկը հարկավոր է լուծել թույլ և շատ, մի քիչ թողնել, վորպեսզի նրա մեջ չեղած չլուծվող հատիկներն ու կեղտերը նստեն հատակին:

Վրձինը պետք է թրջել ներկի մեջ այնպես, վոր վրձինը հատակին չկաշի: Ներկվելիք մակերեսը հարկավոր է նախորոք ծածկել մաքուր ջրով, թողնել, վոր քիչ չորանա և ապա ներկել: Յեթի կարիք է լինում ներկելու մեծ մակերես, ապա գծագրերը հարկավոր է թեքել և սկսել ներկել վերից ներքև հորիզոնական շերտերով, այնպես առատ, վոր ներքևը միշտ ներկ լինի: Դրանից առաջացած ներկի կուտակումը պետք է ջարուհակել իջեցնել զուգահեռ շերտերով մինչև ծայրը և վերջն արդեն մի քիչ չորացնել: Ներկելու ժամանակ արդեն ներկած տեղը չի կարելի յերկրորդ անգամ ներկել կամ ներկը մի անդ յերկար թողնել, հակառակ դեպքում կետեր կտապվեն: Յեթի ներկումը վերջացնելուց հետո ավել մակերեսի վրա ներկի կուտակում է առջանում, հարկավոր է ավելորդ ներկը վրձինով հավաքել, վրձինը թափ տալ կամ լաթի կտորով մաքրել և կրկին հավաքել, կամ դիմել ծծողականի ոգնութեան: Ներկելու ժամանակ պետք է աշխատել ներկվող մակերեսի ստեմանը չանցնել: Աշխատանքի ժամանակ վրձինը միշտ պետք է թաց լինի:

Վրձին.—Գծագրերը ներկելու համար հարկավոր է ունենալ յերկու տեսակ վրձին: Մեծ չափին համապատասխանում է № 6 կամ 7, իսկ փոքրին № 5 կամ 6: Գերադասելի չէ յերկու ծայրանի վրձինը, վորի վրա յերկու չափերն էլ կան: Վրձինի հատկութունը վորոշելու համար հարկավոր է գցել ջրի մեջ, հանել, նրա վրայի ջուրը քամել, յեթե նա դարձյալ փափուկ կլինի, նրա ծայրը չի բաժանվի և մաղերը չեն թափվի, ուրեմն վրձինը պիտանի չէ աշխատանքի համար:



ՆԿ ԱՅԷ


Գծագրական ցախսակ.—Թղթի կտորը, վորի վրա պետք է գծել, սովորաբար կնուպկաներով կամ սոսինձով յեղրներն ամրացնում են գծագրական տախտակին: Ամենալավը համարվում են յերկկողմանի տախտակները, վորովհետև կարելի չէ ոգտվել յերկու կողմից: Նրա միջի մասը շինվում է լորենուց, իսկ կողի ծայրերը ավելի պինդ փայտից (նկար 1): Գծագրելու համար պիտանի չեն համարվում այն տախտակները, վորոնց յեղրերն ուղղագիծ են մակերեսը հարթ, իսկ անկյունները խիստ ուղիղ (90°): Տախտակների չափերը դանազան են լինում, ըստ կարիքի: Ամենագործածական չափն է 75×100 սանտիմետր, այսինքն՝ մի թերթ վատմանի թղթի չափը:

Քանոն.—Ուղիղ գծեր գծելու քանոնը պետք է բարակ լինի: Դրասենյակային հաստ, ծոմոված կողերով քանոնը գծագրութեան համար անպետք է: Քանոնի կողերն ստուգում են հետևյալ ձևով. քանոնը դնում են թղթի վրա և մատիտի սուր ծայրով քաշում են մի գիծ, այնուհետև քանոնը շրջում են, նույն


կողով դնում են գծի վրա և կրկին գծում: Յեթե քանոնն ուղիղ է, յերկու գծերը պետք է ձուլվեն: Ստուգումը պետք է կատարել յերկու կողմից:

Բիսուրինա.—Բիսուրինան կազմված է սովորական քանոնից, վորն ուղիղ անկյան տակ ամբողջված է ավելի փոքր և հաստ քանոնին, վորը կոչվում է գլուխ: Նա ծառայում է զուգահեռ և ուղղահայաց գծեր գծելու համար: Զուգահեռ գծեր գծելու համար բիսուրինան դրվում է տախտակի վրա այնպես, վոր նրա գլուխը կարողանա սահել տախտակի ձախ կողի լեզերքով, ամբողջ յերկարությամբ: Առաջին գիծը գծելուց հետո, յեթե բիսուրինայի գլուխը սահեցնեն տախտակի յեզրով և գծեն նորանոր գծեր, ապա այդ բոլորն ել կլինեն իրար զուգահեռ: Ուղղահայաց գծեր գծելու համար բիսուրինայի գլուխը դնում են տախտակի ներքևի կողին, իսկ հորիզոնական գծեր քաշելիս ձախ կողին: Բիսուրինայի ոգնությամբ թե զուգահեռ և թե ուղղահայաց գծերը գծվում են մեծ արագությամբ:

Յեռանկյունի.—Յեռանկյունին ծառայում է նույնպես զուգահեռ և ուղղահայաց գծեր տանելու համար, բայց առանց բիսուրինայի ոգնության: Ամենաընդունված յեռանկյունին համարվում է այն ուղղահայաց յեռանկյունին, վորի սուր անկյուններից մեկը 60° , իսկ մյուսը 30° (նկար 3, 4) և հավասարասրուն է:




Նկար 3



Նկար 4

ուղղանկյուն յեռանկյունին, վորի չորս քանոնը սուր անկյունը 45° աստիճան է: Ինչպես հետագայում կտեսնենք առաջինի գործադրումն զգալի շփով արագացնում է գալիաների գծագրումը, իսկ յերկրորդով վորոշվում է կտրվածքների, շտրիխների թեքությունը:


Յեռանկյունու ուղիղ անկյան ստուգումը կատարվում է հետևյալ կերպ (նկար 5) վերցնում են ստուգված քանոնը և դնում թղթի վրա, այնուհետև մոտեցնելով նրա յեռանկյունու փոքր



Նկար 5

եջը մեծ եջի վրայով դնում են: Յեռանկյունին շքշում է մյուս կողմով փոքր եջով մոտեցնում են քանոնին մինչև մեծ եջով քաշած գիծը:


Յեթե մեծ եջը համընկնում է այդ գծի հետ, ուրեմն անկյունը ուղիղ է: Յեռանկյունու ոգնությամբ ուղիղ գծի վրա ուղղահայաց գծեր կառուցելու համար հարկավոր է քանոնը կամ բիսուրինան դնել



Նկար 6

ուղիղ գծի վրա և նրա վրա հենել յեռանկյունու փոքր եջը, այն ժամանակ յեռանկյունու մեծ եջն ուղղահայաց դրություն կրողունի դեպի տվյալ ուղիղ գիծը (նկար 6): Քանոնը ձախ ձեռքով քոնելով և նրա վրա յեռանկյունին աջ կամ ձախ սահեցնելով

մենք կգծենք մի շարք ուղղահայաց գծեր, վորոնք զուգահեռ
 կլինեն իրար: նման դեպքերում կարելի չի ոգտվիլ նույնպես հետե-
 վյալ միջոցից: Յեռանկյունին ներքնաձիգով դնում են տվյալ
 ուղիղ գծի վրա, իսկ նրա մեծ եջի հետ դնում են քանոնը (նկ. 7).
 վերջինս ձախ ձեռքով լսնելով յեռանկյունին շրջում են և փոք ք
 եջով դնում են քանոնի վրա այնպես, վոր մեծ եջն ուղղահայաց
 գրություն ընդունի դեպի նա: Այն ժամանակ ներքնաձիգը
 ուղղահայաց ուղղություն կրոնի դեպի տվյալ ուղիղ գիծը:



Յեռանկյունին քանոնի վրա շարժելով կստանանք մի շարք
 ուղղահայացներ: Յեռանկյունու ոգնությամբ զուգահեռ գծեր
 գծելու միջոցները նման են ուղղահայացներ կառուցելու միջոց-
 ներին:




Մասշտաբ քանոն.

Մասշտաբային քանոնը (նկ. 8) կամ ուղղակի մասշտաբը կարող
 է լինել ծալովի կամ յեռանիստ պրիզմայի ձևով (վերջինս ավելի
 հարմար է): Մասշտաբի վրա նշանակված է գծագրության ժա-
 մանակ մեզ պատահող յերկարության չափերը՝ սանտիմետր,
 դյույմ, միլիմետրներ, վերջով: Մետրական չափերը, իբրև ամենա-
 գործածական չափերի, պատահում են նաև գծագրական քանոնի և

յոանկյան վրա, վերոնց յեղերներին սովորաբար նշանակված
 են լինում:

Գոտայալայա.—Քատավանյան գծագրական գործիքների մի
 կոմպլեկտ է, վոր տեղավորված է առանձին հարմարեցրած տու-



Նկ. 9
 ՔԱՎԱԳԱՆՈՎԱՆ

Նկ. 10
 ԳՆՈՎԱՆ ՄՍՏՈՏՈՑԻ
 ՄԵՍԵՏՏՈՐ

Նկ. 11

փի մեջ: Սկանակ գծագրողների համար կարելի չի բավարար
 համարել հետևյալ գործիքների քանակը՝ չափակարկին, կարկին,
 կրոնցիրկուլ, կարկին մատիտի և րիյսֆեդեր (նկար 9, 10, 11):

Չափակարկիցն. (նկար 9).—Գործ և անվում գծագրերի մասերը չափելու և գծերի վրա ցանկացած տարածութունները նշանակելու համար:

Կարկիցն. (նկար 10)—Մատիտով և շրջանագծման բեյսֆեղեքով: Հարկավոր և կարկիցնի գլուխը բռնել աջ ձեռքի յերեք մատով աջակես, վոր հնարավոր չափով յերկու ծայրերն ել ուղղահայաց դրութեան մեջ լինեն: Այդ նպատակի համար կարկիցնի ծայրերը շարժական են, փոքր շրջանի համար քիչ են բաց անում, իսկ մեծերի համար շատ: Շրջանագծերը հարկավոր և գծել միանգամից ձախից—աջ (ժամացույցի սլաքի ուղղութեամբ): Այդ կարկիցնին լրացուցիչ կերպով հագցվում և հավելում (նկար 11) այն գեպքում, յեթե պետք և մեծ շառավիղներով շրջանագծերը կառուցել:




Fig. No 9

Կրոնցիբիլ (նկար 12).—Գործ և անվում արտաքին տրամագծեր չափելու համար:


Միկրոցիբիլ.—Գործ և անվում շատ փոքր շրջաններ գծելու համար (նկար 13):

Բեյսֆեղեք.—Գործ և անվում տուշով ուղիղ գծեր քաշելու համար: Բեյսֆեղեքն ունի այնպիսի հարմարութուն, վորով կա-

րկի լի զանազան հաստութեան գծեր ստանալ (տես նկար 14): Բեյսֆեղեքը գործածելու ժամանակ հարկավոր և բռնել աջ ձեռքի յերեք մատով և դնել քանոնի կողին ուղղահայաց դրութեան այնպես, վոր նրա յերկու փեղկերը կաշին թղթին: Բեյսֆեղեքի փեղկերի և քանոնի մեջ պետք և փոքր տարածութուն թողնել: Հարկավոր և գծել ձախից աջ հենվելով հաստատ, մասների վրա, այլ վոչ թե ձեռքի վրա: Բեյսֆեղեքի մեջ տուշը լցվում և սրածայր փետուրով: Պետք և շուտ-շուտ փեղկերը մաքրել չորացած տուշից: Յեթե բեյսֆեղեքը չի գծում կամ ընդհատվող գծեր և տալիս (այդ պատահում ե, յերբ տուշը փեղկերի ծայրին չորաց-



Fig. No 12



նում և), հարկավոր և ծայրը քսել թաց կտորի կամ թղթի վրա և, յեթե այդ ել չողնի, հարկավոր և փեղկերի միջով անցկացնել բարակ թղթի շերտ: Յեթե փեղկերի մեջ տուշի մեծ կոշա և առաջացել հարկավոր և մաքրել խոնավ լաթով, հետո չորացնել, իսկ ընդհանրապես չպետք և թույլ տալ բեյսֆեղեքի միջի տուշը վերջանա, այլ պետք և հաճախ լցնել: Գծի բարակ կամ հասարակից կախված և նրանից թե փեղկերի մեջ վաղքան տարածութուն և թողնված: Այդ կարելի լի կանոնավորել պտուտակի միջոցով, վորը գանվում և բեյսֆեղեքի դրսի կողի վրա: Նախքան գործածելը—տուշով լիքը բեյսֆեղեքն արտաքին կողմից չորաց-

նում և փորձում են առանձին թղթի վրա: Աշխատանքը վերջացնելուց հետո, ինչպես բեյսֆեդերը, նույնպես և շրջանագծող ծայրը, մաքրում են խոնավ լաթով և չորացնում:


ՄԱՏԻՏ
(ԳՍՈԳԻՍԻՆ
ՆԱԳՅԿՈՂ)



ՌԵՍՏԵՏԵՐ
(ԳՍՈԳԻՍԻՆ
ՆԱԳՅԿՈՂ)



ՆԱ ՄԿ
ՌԵՏՆԵՂԵՐ



ՆԱ ՄԵ 15


Կրոնցիրկուլ-ներսաչափ

Կրոնցիրկուլ ներսաչափ (նկար 15).— Գործ է անում ներքին տրամագծեր չափելու համար:

Առաջինը գործ է անում արտաքին չափումները կատարելու համար, իսկ յերկրորդը՝ անցքերը չափելու համար:

§ 2. Ընդունված գծեր յեվ նրանց պայմանական նշանակումները

Գծերը լինում են ուղիղ և կոր, բարակ և հաստ, անընդհատ և պոռնկափրային: Պունկափրային գծերն այն ընդհատվող գծերն են, վորոնք կազմված են փոքրիկ գծիկներից: Գծագրերի մեջ պայմանական գծերը դասավորվում են հետևյալ կերպ: Անհետանելի, սեսանելի ուրվագծային յեվ հասարակ, վորոնք գծում են սե տուշով և հաստ՝ մոտավորապես մեկ միլիմետր հաստությամբ (նկար 16 b):



ՆԱ ՄԵ 16

Անհետանելի գծեր.— Գծում են բարակ պոռնկափրայինով սե տուշով (նկար 16 c) առանցքները գծում են կապույտ և սև, բարակ կետագծերով (նկար 16d, 1):


Չափագծեր.— Չափագծերով ցույց են տրվում գծագրի այս կամ այն գծի լերկարությունը, շրջանագծի շառավղի կամ արտաքին մեծությունը, յերկու գծերի միջի հեռավորությունը և այլն: Գծվում են շատ բարակ անընդհատ գծով կարմիր և կամ սե տուշով: Չափագծերի մեջտեղը գծի մի փոքր ընդհատում է արվում (նկ. № 16 f, k), վորտեղ նշանակվում է չափն արտահայտող թիվը, պարզ հավասար մեծության թվանշաններով և ուղղահայաց դեպի չափագրից:

Չափագծի ծայրերը վերջանում են սուր սղմված ու բավական յերկար սլաքներով, վորոնք գծվում են սե տուշով (տես նկար № 16 f, k):

- Դո ԲԱ քերվող գծեր — Գծում են կարմիր տուշով կամ սև շատ բարակ պուենկտիրներով (նկար 16գ):

Կսրվածներ ցույց սվող գծեր. — Գծում են սև կետագծերով նույն հաստությամբ ինչպես կոնտուրային գծերը (ուրվագծեր). (նկ. № 16, ց):

Գծագրի առանցքը. — Ամեն մի գծագրի համար հարկավոր է ամենից առաջ գծել նրա ստանցքները, այսինքն այն յերկու իրար փոխուղղահայաց գծերը, վորոնցով թերթը բաժանվում է յերկու հավասար մասի — լայնության և յերկարության վրա: Առանձնապես այդ անհրաժեշտ է այն դեպքում, յերբ ստիպված ենք լինում աշխատել առանց գծագրական տախտակի, հետևաբար և առանց բեյաշինայի: Այդ դեպքում գծագրի բոլոր գծերը, վորոնք ունեն հորիզոնական և ուղղահայաց դրություն, պետք է գծել խիստ զուգահեռ գծալի մեր ունեցած առանցքները:



Գծագրի առանցքն ստուգելու համար քանոնի կամ բեյաշինայի ոգնութիւնը տանում են անկյունագծերը, վորոնց հատման կետը կլինի թղթի կենտրոնը: Այդ կետից կամավոր շառավիղով գծում են մի շրջան, վորը կհասի անկյունագծերը չորս կետերում՝ 1, 2, 3 և 4. 1 և 2 կետերի միջի տարածության կեսից մեծ շառավիղով գծում են աղեղներ, նույնպես 3 և 4 կետերից, ինչպես կենտրոններից, վորոնք հատվում են

AB կետերում: Այդ կետերի վրայով գծում են ուղիղ գիծ և ստանում A' B' գծերը, վորով թերթը յերկարության վրա բաժանվի յերկու մասի շրջանը կհատվի C և D կետերում: Այդ կետերից ինչպես կենտրոններից C D տարածության կեսից մեծ շառավիղով, գծում ենք աղեղներ, վորոնք հատվելով միմյանց հետ, կտան E և F կետերը: Այդ կետերից գծվում են ուղիղ գիծ և ստանում E' F գիծը, վորով թերթը բաժանվում է լայնության վրա յերկու մասի և ուղղահայաց է լինում դեպի A' B' գիծը: A' B' և E' F գծերը կլինեն մեր փնտրած առանցքները:

§ 3. Գծագրի դասավորումը քերթի վրա յեկ ստերը

Գծագրի համար մեծ նշանակություն ունի նրա դասավորումը թերթի վրա, ինչպես և գրերի ձևը: Անհաջող դասավորման և անհամաչափ ու թափափված կերպով կատարած աշխատանքների պատճառով գծվածքը կորցնում է իր տեսքը, գեղեցկութունը: Գծվածքի դասավորումը թղթի վրա պետք է լինի համաչափ, այսինքն հարկավոր է հետևել, վոր մի տեղ գծերը խառնված ու խճճված չլինեն և մյուս տեղը թուղթը դատարկ չլինի:

Վերնագրի համար հարկավոր է այնքան տեղ թողնել, վոր թղթի ծայրերին չհասնի: Գրերը պետք է համաչափ լինեն գրվածքի չափերին, պարզ, հասարակ և խիստ սիմետրիկ կերպով դասավորված: Բոլոր յերկրորդական գրվածքի տառերի բարձրությունը մի սանտիմետրից ավել չպետք է լինի, իսկ թվանշանները 3 մ. մ. ավել:

Տառերը գրվում են — նորմալ կամ զլայագրական օրիճակ:

Ինչպես առաջին, այնպես էլ յերկրորդ դեպքում, տառերը հարմար է գրել ուղղահայաց դրությամբ: Գրերը գեղեցիկ են ստացվում այն դեպքում, յերբ տառերն ունեն միատեսակ չափեր. շարիներին հաստութունը և տարածությունը պետք է հավասար լինի. տառերի և խոսքերի միջի տարածությունը չի կարելի մեծ թողնել, հակառակ դեպքում տառերը գեղեցիկ չեն ստացվի:


Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

Վարժարյուն № 1. — Հարթ թղթի միայն մի յերեսի վրա կատարել մատիտով հետևյալ աշխատանքը, ըստ տրված չափերի բարակ գծերը ¹/₃ կամ ¹/₄ մ. մ. հաստությամբ (որինակ № 1-ին):


Թղթի յերկարությունը վերցնել 20 սանտ., լայնությունը 16 սանտ., թղթի չորս կողմից թողնել 2 ական սան-

տիմետրի Կառուցիչը շրջանակ 16 սանտիմետր լերկարությամբ և 12 սանտիմետր լայնությամբ և այդ շրջանակի մի կողմը բաժանել ուղիղ 16 հավասար մասի ու տանել այդ կետերով զուգահեռ գծեր շրջանակի մյուս կողմին: Այդ աշխատանքների համար գործածել քանոն և յերկու լեռանկուռնի:

Վարժարյուն № 2 յեղ 3.—Նույնպիսի թղթի կտորի վրա մատիտով գծել պուճկատիրային գծեր $1\frac{1}{2}$ կամ $1\frac{1}{3}$ մ.մ. հաստությամբ (աչքաչափով) № 2 և 3 որինակն երե համաձայն:



ՈՐԻՆԱԿ № 1



ՈՐԻՆԱԿ № 2

Որինակ № 2 և 3.—Թղթի մեծութունը և չափերը նույնն են, ինչ վոր տրված էր № 1 որինակում: Պուճկատիրաների յերկարությունը պետք է լինի 3—4 մ.մ, պուճկատիրաների միջին տարածությունը 2 մ.մ. (տես որինակ № 2):

Կետ—գծերը հարկավոր է դասավորել աջնապես, վոր գծիկները լինեն 3—4 միլիմետր յերկարության և միջի տարածությունը նույնքան: Կետը հարկավոր է գնել ուղիղ յերկու գծերի մեջ տեղում (տես որինակ № 3): Այդ վարժարյունները կատարել 2 աշխատանքով:

Վարժարյուն № 4.—Նույն չափի թղթի վրա կատարել խառը վարժարյուններ, գծել պուճկատիրաներ, կետ—գծեր, յերկու կետ—գծեր, և անընդհատ գծեր:


Վարժարյուն № 5.—Կատարել վարժարյուն առանցքներ

գտնելու համար, համաձայն № 5 գծվածքի, նույն մեծության թղթի վրա, ինչ վոր տրված էր վերևում վարժարյունների համար:

Բոլոր վերոհիշյալ աշխատանքները հարկավոր է կատարել մեծ խնամքով և մաքուր, աշխատել ջնջումներ չանել, գծերը համապատասխան լինեն տված չափերին և պետք է միատեսակ հաստութուն ունենան:




ՈՐԻՆԱԿ № 3




ՈՐԻՆԱԿ № 4

Վարժարյուն № 6 և 7: Շարիխովկա. (որինակ 5,6):

Նույն չափի թղթի կտորի վրա յերկու անկուռնակների միջև կատարել շարիխովկա շատ բարակ գծերով: Շարիխովկայի



ՈՐԻՆԱԿ № 5



ՈՐԻՆԱԿ № 6


գծերը պետք է թեքված լինեն դեպի աջ 45 աստիճանի վրա: Գծերի միջին տարածությունը պետք լինի 2 մմ. և անհրաժեշտ է աշխատանքը կատարել զգուշացող և ուշադրությամբ, վորպեսզի գծերի հաստութունը լինի տարածությունը լի-




նեն միասնակ և հավասար: Վարժություն № 6 կատարել նույն ձևով, բայց հաստ գծերով, վորոնք պետք է հավասար լինեն 1 մմ. հաստության:

Վարժուրյուն № 8 և 9-ը: Շտրիխովկա (որինակ 7 և 8):

№ 8 վարժության գծերը (տես որինակ № 7) պետք է լինեն նույնպես թեքված, ինչպես № 5 և 6 (որինակ նկ. 5 և 6): Գծել նախ բարակ և ապա նրան զուգահեռ 1 մմ-ի վրա քաշել հաստը: Հաստ գծից հետո թողնել լերկու մմ. և քաշել բարակ գիծ ու ալդպես շարունակել:



ՈՐԻՆԱԿ N7



ՈՐԻՆԱԿ N8

№ 9 վարժությունը կատարել այսպես. (տես որինակ № 8): Հաստ գծերը 45° տակ թեքել դեպի աջ, իսկ բարակ գծերը թեքել 45 աստիճանի տակ աջից դեպի ձախ:

Վարժուրյուն № 10: Տառագրություն. (ստանդարտ չափերով հայերեն տառեր) տառերի որինակները:

Տառերը կարելի չէ գրել ամեն տեսակի չափերով՝ հաստ, բարակ և այլն: Վարպետի տառերն ունենան մշտական մեծություններ, ամբողջ իրենց մարմնով, անհրաժեշտ է միշտ հիմնվել այն բոլոր տվյալների վրա, վորոնք ունեն մշակված որենքները, նրա թեքվածքի հաստության միջին տարածությունների համար, ինչպես որինակում ցույց է տրված «ի» տառով:



Որինակ № 9

Տառերի հաստությունը պետք է լինի տառի բարձրության 1/8-ը, իսկ տառի լայնությունը՝ նրա բարձրության կեսը: Գործ են անվում նաև այնպիսի տառեր, վորոնց բարձրությունը և լայնությունը հակառակ հարաբերությունն ունեն:

Տառերը թեք գրելու համար, տառի ամբողջ բարձրությունը կիսում են և ապա այդ մեծության չափով վերցնում են 5 մաս գծված ուղղահայացի վրա. 5-րդ կետից հորիզոնական դիրքով դեպի աջ ուղիղ անկյան տակ տանում են յերկու չափամաս գիծ, վորի ծայրը միացնում են ցածի 0 կետի հետ. ստացված թեք գիծը տալիս է տառի թեքվածքը դեպի աջ:

Նույն հիմունքներով կարելի չէ կատարել նաև ուսերեն տառերը:

Վարժուրյուն № 11 (ստանդարտ չափերով ուսերեն տառեր).— Ուսերեն տառերի որինակը. (տես որինակ № 9):

Այս տառերի ձևով գրել հայերեն նույն մեծության թղթի վրա մի քանի խոսքեր, վորոնք հաճախ գործ են անվում գրծվածքների վրա, այսինքն՝ «նախադիծ», «կտրվածք», «ֆասադ», «ջրանցք» և այլն:

Գրել նաև ուսերեն բառեր, ինչպես որինակ՝ «фасад», «разрез», «жилой дом», «канал», «план» և այլն:

Ցուցմունք.— Վերոհիշյալ վարժություններն ու խնդիրները կատարել և աստիճանաբար ուղարկել, վոր ձեռք առ շախատած քն ստուգվի և վերադարձվի ձեզ: Աշխատանքներ կատարելու համար ամեն մի ուսանող պետք է առաջին հերթին ձեռք բերի գծագրական մատիտ, փափուկ ռետին, յերկու հատ անկյունակ, մեկ հատ քանոն, մեկ հասարակ կարկին (վորը հապցվում է մատիտի վրա) հաստ ու հարթ գծագրական թուղթ (կիսավատման):

Գծագրական աշխատանքները կատարել հարթ տախտակի վրա, աշխատել վոր թե գործիքները և թե ձեռքերը մաքուր լինեն, հակառակ դեպքում գծվածքը կկեղտոտվի:

Վորջան կարելի չէ ջնջումներ շատ քիչ անել, վորովհետև թուղթը դրանից մաշվում և փշանում է:

Այս առաջադրությունն ստանալուն պես նախ և առաջ շատ մեծ ուշադրությամբ կարդալ և յեթե կլինեն անհասկանալի տեղեր, խորհրդով դիմել հենման կետին կամ ձեռ աշխատանքների վայրերում աշխատող ճարտարապետ-տեխնիկներին:

Կարող եք նաև դիմել տեխնիկումի վարչությանն այս կամ այն անհրաժեշտ խնդիրների շուրջը վորոշ մեթոդական ցույց-մունքներ ստանալու համար:

ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐԵՐԻՑ

Ա.Ռ.Ա.ԶԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2

Մի շարք դասընթացների յուրացման համար անհրաժեշտ է, վոր ուսանողը կարողանա կարգալուստումնասիրել գծվածքը: Գծագրության առաջադրությունները պետք է ոգնեն այդ գործում: Սակայն գծվածքներից ողավելու հիմունքներից բացի՝ կան նաև այլ նասկացողություններ, վորոնց մասին կխոսենք հետագայում:

§ 1. Տեխնիկական գծագրությունը յեվ նաև սարքերությունը նկարչությունից ու կենդանագրությունից

Մեքենաների, շենքերի կամ այլ ինժեներական կառուցվածքների կառուցման կամ նորոգման համար, մեքենաների և շենքերի նոր ձևեր մշակելու համար, համարյա միշտ կարիք է լինում գծագրել թղթի, կարտոնի կամ կալկայի վրա՝ (թափանցիկ կամ մոմած թուղթ) համապատասխան գործիքների ոգնությամբ, վորոնք են՝ կարկինը, քանոնը և այլն: Այդ գծվածքների վրա վորոշ ձևով ցույց է տրվում առարկայի վորեև մասի ձևը, նրա դրությունը մյուս մասերի նկատմամբ, նրա չափերը և նյութը՝ ինչից նա պատրաստված է:

Այդ գծվածքների հիման վրա, փորձված ճարտարապետը կամ տեխնիկը կարող է հեղտությունը վորոշել այդ մասերի կշիռը, ծավալը և հետագա աշխատանքի չափերը, արժեքը և կատարման ժամկետը: Գծվածքները հնարավորություն են տալիս նախատեսել անհարմարությունները, նկատել կոնստրուկցիայի սխալները և նախքան աշխատանքներն սկսելը (այսինքն՝ նախքան բանվորական ուժի և նյութի ծախսումը) մտցնել այս կամ այն ուղղումները և այլն:

Արտադրական կամ կառուցման նպատակների համար ծառայող առարկաների կամ նրանց մասերի գրաֆիկական պատկերացումը հարթության վրա կոչվում է տեխնիկական գծագրություն:


Գրաֆիկական արվեստների մեջ տեխնիկական գծագրությունն առանձին տեղ է գրավում: Այն ժամանակ, չեք նկարչությունը կամ կենդանագրությունը ձգտում են պատկերացնել նկարչի տեսածն ու մտածածն այնպես, ինչպես նա թվում է կամ կարող է և թվալ գիտողին վորոշ տեղից: Տեխնիկական գծագրությունը նպատակ է դնում պատկերացնել մտածված կամ քնության մեջ գոյություն ունեցող առարկան այնպես, վոր նայելով գծվածքին կարելի լինի ճշտությամբ և համեմատաբար արագ վորոշել՝ ինչպիսին է նա իրականում և ինչպիսին է նրա իսկական չափերը:

Այդ խնդիրները լուծելիս տեխնիկական գծագրությունն առարկաներին տալիս է այնպիսի պատկերացում, վոր գծագրությանն անձանոթ մարդը դեռևս դժվարանում է հասկանալ թե ինչ առարկա յե պատկերացված գծագրի մեջ:

Վերոհիշյալի համար որինակ կարող է ծառայել բաժակի պատկերացումը, վորը տրված է իբրև նկար (ձև 1) և իբրև գրվածք (ձև 2, 3, 4):

№ 1 ձևն իր շուքով, վերին և ներքին հիմքերի կոր գծերով կարող է ամեն մեկի, նույնիսկ նկարել չիմացողի յերևակայության մեջ պատկերացնի իբրև զլանածև՝ դատարկ առարկա:

Որինակ՝ նկարիչը չի կարող համոզված կերպով ասել, թե բաժակի հատակը կլոր է թե ձվաձև: Իսկ № 2, 3, 4 ձևերը, գծագրություն չիմացողի համար նույնիսկ, զլանածև առարկայի նման չեն լինի, նրանք ավել



շուտ առանձնացած հարթ ձևեր կհիշեցնեն, իսկ տեխնիկական գծվածք կարգացողի համար այդ ձևերը ներկայացնում են դատարկ գլան՝ կլոր հիմքով, վորի պատերի և հատակի հաստությունը ցույց է տրված:

§ 2. Ն ա խ ա գ ծ ու մ

Ինչպես վերոհիշյալից յերևում է, տեխնիկական գծագրությունը ձգտում է տալ իրապես գոյություն ունեցող կամ մտածված առարկայի այնպիսի պատկերացում, ըստ վորի նրա բոլոր մասերը, ձևերը և ամեն մի մասի նյութը, նրանց դասավորումը և չափերը հնարավոր լինի ճշգրիտ ու արագ կերպով վորոշել և պեռք յեղած դեպքում կառուցել կամ պատրաստել:

Վորպեսզի գծագրողը կարողանա տեխնիկական գծվածք գծել, նա իր տրամադրություն տակ պետք է ունենա իրեն հետաքրքրող առարկայի վերաբերյալ բոլոր տվյալները. այդ պատճառով հետազոտում մենք նկատի կունենանք միայն նախադրման այն սեսակը, ըստ վորի պատկերացվում են միայն գոյություն ունեցող առարկաները, այսինքն՝ վորոնց չափերը հեշտ է վորոշել կամ գոյություն չունեցողներից այնպիսիք, վորոնց բոլոր տվյալները հայտնի յե նախագծողին:

Նկարչությունը և կենդանագրությունը յեխնում են զիտականորեն ընդունված այն սկզբունքից, վոր դիտվող առարկայի տպավորությունն ստացվում է լույսի ճառագայթների ազդեցությունից դիտողի աչքի վրա, վորոնք անցնում են առարկայի մակերևույթի կետերից և միանում են դիտողի աչքում: Նկարը հեշտ է պատկերացնել, յեթե ընդունենք, վոր վերոհիշյալ լույսի ճառագայթները, վորոնք յեխնում են առարկայից, ճանապարհին պատահում են վորև հարթություն: Լույսի ճառագայթները և հարթության հատման դիժը կտա առարկայի նկարը: Հարթությունը կարելի յե պատկերացնել և առարկայի հետևը, միայն հարկավոր է յերևակայել, վոր հիշյալ ճառագայթները շարունակվում են մինչև հարթության հետ հատվել:


Նկարը գտնելու այդ մեթոդը կոչվում է կենցրոնական նախագծում. այն ուղիղները, վորոնք վորոշված կետից գնում են դեպի մարմնի մակերևույթի կետերը—կոչվում են պրոյեկտող գծեր, իսկ այն հարթությունը, վորի վրա ստացվում է մարմնի պատկերը, կոչվում է պատկերի հարթություն: Այն ֆիզուրան, վորն ստացվում է պրոյեկտող գծերի ու հարթության հատու-

մով կոչվում է կենտրոնական կամ պերեսպեկտիվ պրոյեկցիա, իսկ հաճախ ուղղակի պերսպեկտիվա (հեռանկար):

Այդպիսի նախագծման ժամանակ մենք ստանում ենք այնպիսի նկար, ուր ձևերն աղճատված են ու առարկայի զանազան գծերի փոխարարբերությունները հաճախ իրականին չեն համապատասխանում:

Որինակ՝ յերկաթուղու սեղանը մենք նկարում ենք դիտողից հեռանալիս, ավելի մոտ իրար: Մեր դիմաց դրված ուղիղ անկյունավոր արկղը նկարում ենք տրապեցիայի (սեղանաձև) նման, վոչ զուգահեռ կողերով ab և bc (վերին և ներքին) և անհավասար զուգահեռ aB և bC (տես ձև № 5):

Վորպեսզի խուսափեն պատկերացված առարկայի ձևերի և չափերի մասին սխալ հասկացողություն կազմելուց և նրա իսկական չափերը հեշտ վորոշելու համար, նախագծման ժամանակ յեխնում ենք այն յեղրակացությունից, վոր դիտողի կամ նախագծողի աչքը գտնվում է զատկերացվող առարկայից անձայր հեռավորության վրա:



Ձև 4

Ձև № 5.

Յեթե առարկայի վերջնական չափերն ունեք, այն դեպքում բոլոր ճառագայթները զուգահեռ կլինեն իրար: Նման նախագծումի ժամանակ ընդհանրապես յենթադրվում է, վոր նկարի պրոյեկցիայի հարթությունը տեղավորվում է առարկայի յետևը, իսկ ճառագայթները ուղղված են ուղղահայաց դեպի նա: Այդ դեպքում վորև առարկայի պրոյեկցիան գտնելու համար, բավական է նրա կետերից ուղղահայաց գծեր տանել մինչև պրոյեկցիայի հարթությունը և ուղղահայացների հիմքերը միացնել չընդհատվող գծերով:


Բայց միայն այդ ձևով ստացված պրոյեկցիան բավարար չի կարելի համարել նախագծվող առարկայի իսկական տեսքը և չափերը վորոշելու համար:

Վոչ հավասար, բայց տարբեր կերպով դրված քառակուսիները $ABBC$ և $DEKZ$ ինչպես յերևում է № 6 ձևից նախազրծվում է $ΠΠ$ հարթության վրա միանգամայն միատեսակ $aBbC$ քառակուսու ձևով, վորովհետև A և $Д$, B և E , B և K , 3 և $Г$

կետերը գտնվում են նախագծող դժերի վրա և հետևաբար տալիս են միևնույն պրոյեկցիաները (տես ձև № 6):

Առարկայի ձևի, չափերի և դրուժյան մասին ճիշտ գաղափար են տալիս յերկու հարթութունների վրա ստացված պրոյեկցիաները, վորոնք վորոշ ձևով տեղավորված են իրար հանդեպ:

Սովորաբար ալդպիսի հարթութուններն ընտրվում են իրար փոխուղղահայաց, վորոնցից մեկը հորիզոնական է, իսկ մյուսը ուղղահիգ: Ալդպիսի պատկերացումները կոչվում են ուղղանկյուն, կամ որտոտնալ պրոյեկցիաներ: Հորիզոնական հարթության վրա ստացված պրոյեկցիան կոչվում է հորիզոնական պրոյեկցիա, իսկ ուղղահիգ հարթության վրա՝ ուղղահիգ պրոյեկցիա: Յեթե պատկերացվում է, վոր առարկան ուղիղ կանգնած է զիտողի կամ նախագծողի առաջ, իսկ պրոյեկցիայի ուղղահիգ հարթութունը գտնվում է առարկայի հետևը, ապա ալդ հար-



ՉԵԿ.

Ձև № 6.

թության վրա առաջացած պրոյեկցիան կոչվում է «Ֆասադ»:

Իրականում ալդ յերկու պրոյեկցիաները (ուղղահիգ և հորիզոնական) գծվում են գծվածքի միևնույն հարթության վրա:

Պրոյեկցիաների հարթության համատեղումից հետո առանցքից վեր կստացվի առարկայի ուղղահիգ պրոյեկցիան, իսկ ներքև հորիզոնական պրոյեկցիան:

Հարթութունների այդ դասավորումը կոչվում է նրանց համատեղումը (совмещение): Յերկու պրոյեկցիաների հարաբերական տեղավորումը, վորը կստացվի պրոյեկցիայի հարթութունների համատեղումից, մի հարթության պրոյեկցիան գծվում է գծվածքի վրա, վերևից ուղղահիգ, իսկ հորիզոնականը գծվում

է նրա տակը և վորոշ որենքներով, վորոնց մասին կխոսենք հետագայում:

Ալդ ձևով ստացված գծվածքը կոչվում է եպլուս:

Հաճախ նախագծվում է նաև յերրորդ հարթության վրա, վորն ուղղահայաց է և՛ հորիզոնական, և՛ ուղղահիգ պրոյեկցիաների հարթութուններին:

Յեթե հարթութունն ուղղահիգ է և յենթադրվում է տեղավորել առարկայի ձախ կողմը (սովորաբար աջ)՝ նրա վրա ստացված պրոյեկցիան կոչվում է առաջիայի պրոճիլը կամ ձախազողմյան սեխ, յեթե պրոյեկցիայի հարթութունը տեղավորված է առարկայի աջ կողմը՝ աջազողմյան սեխ:

Յենթադրվում է, վոր յեթե պրոֆիլի ուղղահիգ հարթութունը գտնվում է առարկայի աջ կողմը, ապա պատվում է իր հատման գծի շուրջը՝ պրոյեկցիայի ուղղահիգ հարթության ուղղությամբ, ժամացույցի սլաքի շարժման հակառակ կողմով, մինչև ուղղահիգ հարթության հետ համատեղվելը, և ապա ինչպես վերևում ասված էր, միասին պատվում են պրոյեկցիայի առանցքի շուրջը: Յեթե պրոֆիլի պրոյեկցիան գտնվում է առարկայի ձախ կողմը, յենթադրվում է, վոր պրոյեկցիան պատվում է ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ մինչև ուղղահիգ հարթության հետ համադրելը և այնուհետև պատվում են միասին մինչև պրոյեկցիայի հորիզոնական հարթության հետ համատեղվելը:

Նախքան նախագծման որենքներն ավանդելը, պետք է հիշել, վոր գծագրերում առարկաները գծվում են փոքրացրած չափերով՝ առարկաների պատկերացումը տրվում է վորո՞ւ մասերով: Մասշտաբի տակ հասկացվում է պատկերացման չափերի և պատկերացվող առարկայի իսկական չափերի հարաբերությունը:

Որտոտնալ նախագծման ժամանակ ինչպես կտեսնենք հետագայում, մասշտաբը համարյա միշտ ցույց է տալիս պրոյեկցիայի չափերի և առարկայի իսկական չափերի հարաբերությունը: Այդ պատճառով մասշտաբը միշտ կանոնավոր կուտորակով է արտահայտվում և հաճախ այնպես, վոր համարիչը լինում է միավոր, իսկ հայտարարը ցույց է տալիս փոքրացման աստիճանը, որինակ՝ 1/2, 1/3, 1/4, 1/10, 1/25, 1/84, 1/100 կամ, ինչպես նախագծերի և աշխարհագրական քարտեզների վրա, համապատասխանում են 1/2 վերստի, 1 վերստի, 3 վերստի, 1 անգլիական

դրույմի մեջ $\frac{1}{1.680.000}$ (40 վերստ դրույմ), $\frac{1}{2.000.000}$ կամ $\frac{1}{5.000.000}$

ավելի փոքր կոտորակներ:

Յերբ առարկայի չափերն անհրաժեշտ է վերածել մետրակա մասերի, ապա մասշտաբը վերցնում են $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$, $\frac{1}{10}$ ու $\frac{1}{100}$, և այլն, իսկական մեծություն: Յերբ չափերը դրույմերով և սաժիններով են վորոշվում, ապա մասշտաբ են վերցվում $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{8}$, $\frac{1}{16}$, $\frac{1}{32}$, $\frac{1}{64}$ և այլն, իսկական մեծություն:

Առանձին դեպքերում ընդունվում է մի ընդհանուր մասշտաբ. որինակ՝

1923 թ. 19/12 կենտրոնադի Գավգործկոմը № 100/277 վորոշումով սահմանել է շինարարական աշխատանքների համար ներկայացվելիք նախագծերի հետևյալ մասշտաբները՝

Դիսավոր նախագիծը . . . 0,002 իսկ. մեծ.

Նախագծեր ըստ հարկերի . . . 0,005 » — » —

Կարվածքները և ֆասադները 0,01 » — » —

Լինում են առանձին դեպքեր, յերբ գծում են մեծադիր կերպով, որինակ, յերբ ուզում են մանր առարկաների պարզ պատկերացումը տալ: Այն ժամանակ գծում են իսկական չափից մեծ մասշտաբով և մասշտաբն արտահայտում են վոր կանոնավոր կոտորակով, կամ վորեք ամբողջ թվի հարաբերությունով դեպի միավորը. որինակ՝ «մասշտաբ 3/2 իսկ. մեծ.» նշանակում է, վոր գծված է պատկերի մեծությունը մեկ ու կես անգամ ավելի յե առարկայի իսկական մեծությունից, կամ մասշտաբ 3/1, նշանակում է, վոր գծադիրը գծված է 3 անգամ մեծ, քան իսկականը պիտի լինի:


Բացի վերոհիշյալ մասշտաբներից, վորոնք կոչվում են թվական, կան նաև գծային մասշտաբներ: Հաճախ միևնույն գծագրի վրա պատահում են թե մեկը և թե մյուսը: Գծային մասշտաբը գծագրային չափ է, այսինքն մի գիծ, վորի ոգնությունը չափվում են առարկայի այս կամ այն գծերը: Գծային մասշտաբի հավասար բաժանմունքները մեծ մասամբ իրենցից ներկայացնում են մեր կողմից ընդունված յերկարություն հիմնական չափերը (մետր, արշին, սաժին և այլն):

§ 3. Նախագծման հիմնական որենկները

Նախագծման ժամանակ մենք տալիս ենք առարկայի տեսքի պատկերացումն այս կամ այն կողմից: Յեվ վորովհետև այդ տեսքը


նրա ուրվագիծն է, ապա նախագծման առաջ խնդիր է դրվում համապատասխան ուրվագծերի (КОНТУРЫ) կամ ձևերի պրոյեկցիաները գծել: Ուրվագծերը և ձևերը գտնելու համար նախ և առաջ հարկավոր է իմանալ գծեր և կետեր նախագծել: Դրա հիման վրա մենք գծագրային յերկրաչափությունից կրերենք այն թեորեմաները, վորոնք հաճախ գործադրվում են տեխնիկական գծագրության մեջ և ապա դրանցից բղխող յեզրակացությունները, վորոնք դարձել են նախագծման հիմնական որենկները:

Յրկու փոխուղղահայաց հարթությունների վրա (ձև № 7) կետի պրոյեկցիաները կազմում են յերկու կետ, տեղավորված եպլուրում, մի ուղիղ գծի վրա, վորն ուղղահայաց է հարթու-



Ձև 264

Ձև № 7.



Ձև № 8.


թյունների հատման գծին (ձև № 8). 7 և 8 ձևերը բացատրում են առաջին թեորեման, իսկ 7-րդ ձևը պատկերացնում է տարածության մեջ (B և Г) կետի պրոյեկցիաներն ուղղաձիգ է հորիզոնական հարթությունների վրա: a' և a կ գծերը հանդիսանում են պրոյեկցիոն հարթությունների հատման գծերն ոժանդակ հարթության հետ, վորն անցնում է Aa' և Aa նախագծող ուղղահայացների վրայով: Г հարթությունը համատեղելուց հետո (B հարթության հետ) a և a' իր տարածությունը ձիշտ անփոփոխ պահելով, կպարկի հարթության՝ a' և a գծի շարունակություն վրա, վորն ուղղահայաց է հարթությունների ուղղաձիգ առանցքին (CD): Այդ ցույց է տրված № 8 ձևի վրա, վորը պատկերացնում է եպլուր, այսինքն՝ պրոյեկցիայի պատկերացումը տեղավորված մի հարթության վրա:

Միանգամայն պարզ է, վոր լիթե մենք ընդհակառակը,—
 հայտարարի հարթութունը ծախենք CD գծով այնպես, վոր Γ հար-
 թութունը դառնա ուղղահայաց դեպի B հարթութունը և $a a'$
 կետերից կառուցենք ուղղահայացներ, ապա այդ ուղղահայացները
 կաթն մեզ A կետը: Այդպիսով մենք տեսնում ենք, վոր կետի
 լերկու պրոյեկցիաները միանգամայն վորոշում են նրա զրու-
 թյունը:


2-Ր Դ Թ Ե Ո Ր Ե Մ Ա

Ուղիղ գծի պրոյեկցիան հարթության վրա ուղիղ գիծ է: Ու-
 ղիղ գծի բոլոր կետերի նախագծող գծերը գտնվում են մի հար-
 թության վրա, վորն ուղղահայաց է պրոյեկցիայի հարթությանը:
 Ուրեմն այդ հարթությունների հատումը կլինի ուղիղ գծի պրո-
 յեկցիան:

Պարզ է, վոր վորոշ լերկարութուն ունեցող ուղիղ գծի



ՉԵԿ
 Ձև № 9.



Ձև № 10.

պրոյեկցիան գտնելու համար բավական է նրա լերկու ծայրա-
 կետերի պրոյեկցիաները գտնել նույն հարթության վրա և այդ
 պրոյեկցիաները միացնել (տես 9 և 10 ձևերը):

Եպլուրայի վրա (ձև № 10) $a' b' = AB$ գծի ուղղաձիգ պրո-
 յեկցիան է $a' k = Aa$ (ձև № 9) $b' n = Bb$, $a b = AB$ գծի հորիզո-
 նական պրոյեկցիան է $a k = Aa'$ և $b n = Bb'$:

Յերբ ուղիղ գիծն ուղղահայաց է պրոյեկցիայի հարթու-
 թյանը, նախագծող ճառագայթը համընկնում է ուղիղ գծի հե-
 և նրա պրոյեկցիան կետ է լինում:

Այն դիտողութունների հիման վրա, վորոնք բերված են
 առաջին թեորեմայի վերջում, մենք գալիս ենք այն լերկա-

կացության, վոր ուղիղ գծի լերկու պրոյեկցիաները միանգա-
 մայն վորոշում են նրա զրութունը:

3-Ր Դ Թ Ե Ո Ր Ե Մ Ա


Գծի կամ ձևի պրոյեկցիան, վորը տեղավորված է պրոյեկ-
 ցիայի հարթությանը զուգահեռ հարթության վրա, նախագծողի
 հետ համահման գիծ կամ ձև է:

Այս դեպքում նախագծող գծերը զուգահեռ կլինեն և ինչ-
 պես զուգահեռ հարթությունների մեջ պարփակված՝ հավասար
 կլինեն, իսկ նախագծվող ձևը և նրա պրոյեկցիան գլանի կամ
 պրիզմայի վերին և ներքևի հիմքերը կ'կազմեն:

4-Ր Դ Թ Ե Ո Ր Ե Մ Ա

Պրոյեկցիայի հարթությանն ուղղահայաց մի վորևև հար-
 թության վրա գտնվող կոր կամ բեկյալ գծի պրոյեկցիան նույն-
 պես ուղիղ գիծ է:

Այս դեպքում պարզ է, վոր
 բոլոր նախագծող գծերը նախա-
 գրվող գծի կամ ձևի հարթու-
 թյան վրա կգտնվեն, իսկ լեր-
 կու հարթության հատումը տա-
 լիս է ուղիղ գիծ (ձև № 11):
 Տված ձևի պրոյեկցիայի վերջա-
 վորության կետերը վորոշում են
 ծայրի A և B կետերի պրոյեկ-
 ցիաներով (a, b): № 11 ձևի a' ,
 b' , b' , Γ , d' պտակերացնում է
 վոր ուղիղ հարթ հինգանկյունի $AB\Gamma D$ ուղղաձիգ պրոյեկ-
 ցիան, վորի հարթութունն ուղղահայաց է պրոյեկցիայի հորի-
 զոնական հարթության հետ: ab գիծը հինգանկյան հորիզոնա-
 կան պրոյեկցիան է, լերկրված Aa և Bb ծայրի նախագծող
 գծերով:



ՉԵԿ
 Ձև № 11.

5-Ր Դ Թ Ե Ո Ր Ե Մ Ա

Պրոյեկցիան այնպիսի գծի կամ ձևի, վորոնք տեղավորված
 են զուգահեռ զրությամբ, պրոյեկցիայի վորևև հարթության հետ
 զուգահեռ հարթության վրա—հարթությունների հատման գծի

հետ զուգահեռ ուղիղ գիծ է: Համաձայն 4-րդ թեորեմայի այդպիսի գծի կամ ձևի պրոյեկցիան պետք է ուղիղ գիծ լինի: Մյուս կողմից գծի կամ ձևի հարթությունը և նրան զուգահեռ պրոյեկցիայի հարթությունը պետք է հասեն 3-րդ հարթությանը, այսինքն՝ պրոյեկցիայի մյուս հարթությանը լերկու զուգահեռ գծերով, վորոնցից մեկը ձևի կամ գծի պրոյեկցիան է, իսկ մյուսը ուղղահայթ և հորիզոնական հարթությունների հատման գիծն է (առանցքը):

§ 4. Ձեվերի ՊՐՈՅԵԿՏԻԱՆ

Հարթ կամ տարածության մեջ ազատ տեղավորված վորոշ ձևի (Ֆիգուրայի) պրոյեկցիան, գտնվում է նրա պերիմետրի (պարագծի) իրար մոտ գտնվող մի շարք կետերի պրոյեկցիաների վորոշումով: Այն անընդհատ գիծը, վորը միացնում է հիշված կետերի պրոյեկցիաները, տվյալ ձևի պրոյեկցիան է: Յեթե ձևն ուղղահայթ է, բավականանում են միայն զագագիծների պրոյեկցիաները գտնելով, վորոնց միացումը տալիս է ձևի պրոյեկցիան: Յեթե ձևը կորագիծ է, նույնիսկ տափակ, ստիպված են լինում վերևում հիշված մանրակրկիտ միջոցով գտնել նրա պրոյեկցիան: Սակայն այն դեպքերում, յերբ կարիք է լինում նախագծել ելեմենտար յերկրաչափության մեջ պատահող տափակ կորագծերը, ինչպես շրջանագիծ ելլիպսը և կամ մուաները, կարելի լի այս կամ այն դյուրացումները մտցնել պրոյեկցիայի գծագրության մեջ:


Որինակ՝ հայտնի լի, վոր շրջանագծի պրոյեկցիան մի հարթության վրա, վորը վոչ զուգահեռ է դեպի նա և վոչ էլ ուղղահայաց—եյլիպսն է: Այն դեպքում, յերբ հարթությունը զուգահեռ է շրջանագծին, վերջինս նախագծվում է նույն շառավիղն ունեցող շրջանագծով, իսկ յերբ հարթությունն ուղղահայաց է շրջանագծի հարթությանը, վերջինս նախագծվում է, վորպես ուղիղ գծի մի հատված, վորի յերկարությունը հավասար է շրջանագծի տրամագծին: Ելլիպսը նույնպես վոչ զուգահեռ հարթության վրա, նախագծվում է ելլիպսի ձևով: Պարզ է, վոր այդ դեպքում խնդիրը միայն կայանում է պրոյեկցիայի հարթությունների վրա ելլիպսի առանցքները գտնելու մեջ:

Այժմ անցնենք մի քանի գործնական խնդիր—որինակներ լուծելուն:

Որինակ 1.—Գծել փայտե հասարակ արկղ, առանց ծածկոցի:

Այս արկղը, վորը մենք պետք է գծենք, ավելի շուտ «նկարենք բնականից», շինված է սանտիմետրանոց փայտից (այսինքն 1 cm հաստություն ունեցող փայտից) և արտաքին չափումով հետևյալ մեծությունն ունի. արկղի հատակն ունի 19 cm յերկարություն և 11 cm լայնություն, կողերի մեծ պատերն ունեն 19 cm յերկարություն և 10 cm բարձրություն, իսկ փոքր կողի պատերն ունեն 11 cm յերկարություն և 10 cm բարձրություն:

Նախքան վորևե առարկա գծելը պետք է մասշտաբ ընտրել:



Ձև № 12.

Վերջինս ընտրվում է նայած նրան, թե ինչ նպատակ է հետապնդում գծվածքը և թե ինչ չափով պարզ կամ բարդ է նախագծվող առարկան ու նրա այս կամ այն մասը:

Ներկա դեպքում հիշած առարկայի պարզության և թղթի վրա նրան տրամադրված փոքր տեղի պատճառով, մենք կվերցնենք այնպիսի մասշտաբ, վորն իսկական մեծության $\frac{1}{10}$ -ին է հավասար:


Դրա համաձայն մենք ներքևի անկյունում գծում ենք գծալին մասշտաբ 1 cm 1 mm մեջ: Դրանից հետո սկսում ենք գծել պրոյեկցիաները:

Յենթադրենք արկղը զրված է այնպես, վոր նրա հատակը հորիզոնական է, իսկ առաջին պատը $AB\Gamma$ զուգահեռ է պրոյեկցիայի ուղղահայթ հարթությանը (տես № 12 ձևը):

Այդ ժամանակ տվյալ պատը և նրա զուգահեռ հետևի պատի ուղղահայթ պրոյեկցիաները կստացվեն առանց ձևերի աղճատման, իսկ իսկական չափերով նախագծելիս՝ առանց չափերի փոփոխման: Վորովհետև մենք նախագծում ենք իսկական $\frac{1}{10}$ չափով, ուստի պրոյեկցիայի չափերը 10 անգամ փոքր կլինեն:

Մեր ընտրած մասշտաբով գծենք $AB\Gamma$ ուղղանկյան

առաջի պատի ուղղաձիգ պրոյեկցիան: Պարզ է, վոր նրա պրոյեկցիան կլինի $a'b'c'$ ուղղանկյունը $b'c'$ և $b'c'$ կողերով—վրանք համապատասխանում են ըստ մեր ընտրած մասշտաբի 19 և 10 սանտիմետրի: $a'b'c'$ ուղղանկյունը գծվում է հետևյալ ձևով. գծում ենք ազատ հորիզոնական գիծ KH և նրա վրա նշանակում ենք մի հատված $b'c'$, վորը համապատասխանում է մեր գծային մասշտաբի 21 cm $b'c'$ ուղիղ գծի ծայրից կտուցում ենք ուղղահայաց գծեր և նրանց վրա մասշտաբի 10 cm հավասար չափով նշանակում ենք $a'b'$ և $b'c'$, լեթե b' և b' կետերը միացնենք, կստանանք մեր ուզած $a'b'c'$ ուղղանկյունին, վորը ներկայացնում է արկղի առաջին կողի պերիմետրի ուղղաձիգ պրոյեկցիան:



Ձև 13 և 14.

Այքով նշմարվում են արկղի հատակի և առաջի ու կողերի պատերի միացման գծերը: Վորովհետև փայտի հաստութունը հավասար է 1 cm, մենք պետք է մեր ընդունած հատակից ($1/10$) մասշտաբից 1 cm, հետ վերցնենք $b'c'$ գծից դեպի վեր, $a'b'$ գծից դեպի աջ և $b'c'$ գծից դեպի ձախ համապատասխան զուգահեռ գծեր տանելով $d'e'$, $ա'զ'$ և $ն'ո'$ կասանանք առաջին պատի մնացած տեսանելի գծերի պրոյեկցիաները:

Այժմ գծենք արկղի հորիզոնական պրոյեկցիան: Արկղի պատերն ուղղաձիգ են, ուրեմն ուղղահայաց են նաև դեպի պրոյեկցիայի հորիզոնական հարթութունը, Յեթե նրանք յերկրաչափական հարթութուններ լինեյին (այսինքն՝ հաստութուն

չունենային)—համաձայն 4-րդ թեորեմայի կնախագծվելին իբրև 4 ուղիղ գծեր, վորոնք կկազմեյին ուղղանկյուն ջառանկյունի:

Քանի վոր արկղի պատերն ունեն վորոշ հաստութուն և նրանց արտաքին ու ներքին մակերևութիւնները ներկայացնում են իրար զուգահեռ հարթութիւններ, ուստի նրանց հորիզոնական պրոյեկցիաներն ստացվում են վորպես իրար զուգահեռ գծեր և կազմում են անկյուններ՝ զուգահեռ կողմերով: Զուգահեռները մեջ յեղած հեռավորութիւնը կախված է արկղի պատերի հաստութիւններից:

Տանք պատերի արտաքին մակերևութի պրոյեկցիան:

A կետի հորիզոնական պրոյեկցիան (a) պետք է գտնվի a^1 ուղղաձիգ գծի վրա, B հորիզոնական պրոյեկցիան (b) պետք է գտնվի ուղղաձիգ b^1 գծի վրա, և միևնույն ժամանակ AB ուղիղ գծի հորիզոնական պրոյեկցիայի վրա: AB ուղիղ գծի հորիզոնական պրոյեկցիան (ab), վորը զուգահեռ է դեպի պրոյեկցիայի ուղղաձիգ հարթութիւնը, պետք է անցնի A կետի հորիզոնական պրոյեկցիայի վրայով, այսինքն a-ի վրայով և համաձայն 5-րդ թեորեմայի պետք է հորիզոնական լինի և զուգահեռ առանցքին:

Գիտենալով, վոր արկղի վերի մասի արտաքին պերիմետրը միևնույնն է, ինչ վոր արկղի հատակինը, ուստի նախագծվում է պրոյեկցիայի հորիզոնական հարթութիւն վրա, իբրև նույնպիսի ուղղանկյունի, վորի կողմը a6 արդեն գտնված է. այդ կողի վրա կտուցում են ուղղանկյունի, վորի մյուս կողմը 6 ր ըստ մասշտաբի հավասար է 11 cm.


Արկղի պատերի ներսի մակերեսի պրոյեկցիան կպատկերացվի իբրև ուղղանկյունանի և փոքր են արտաքին չափերից փայտի կրկնակի հաստութիւնը:

Այդ պատճառով արկղի արտաքին տեսքը հորիզոնական պրոյեկցիայի կողերից պետք է ներս տանել 1 cm. ըստ մասշտաբի մե զուգահեռ գծեր տանելով մենք կգտնենք արկղի ներքին պատերի մակերեսի պրոյեկցիաները:

13 և 14 ձև: Ստուգելով արկղի բոլոր կողմերը, գծվար չե տեսնել, վոր ուզած կողի չափերը հեշտութիւնը կարելի չե վառել, բավական է միայն վրեկ չափ դնել գծային մասշտաբի վրա և կարգաւ մասշտաբով ցույց տված թիվը:


Որինակ № 2:—Նկարեք իսկականից ինքնային կանֆորկան-
Առարկայի համեմատաբար փոքր մեծության պատճառով,
հնարավոր է առարկան նկարել իսկականի $\frac{1}{2}$ չափով:

Կանֆորկան փոքր հիմքով հորիզոնական հարթության վրա
դնելով (ինչպես սովորական դրվում է ինքնայինի ծխնելույզի
վրա) գծում ենք ուղղաձիգ և հորիզոնական պրոյեկցիաների
առանցքային գծերը: Այնուհետև սկսում ենք գծել ուղղաձիգ
պրոյեկցիան:



Ձև 15.

Ձև 15.



Ձև 16.

Ձև 16.

Կանֆորկայի ուղղաձիգ պրոյեկցիան գծելու համար, մենք
AB առանցքային գծի վրա նշանակում ենք a, b, v, r, d, e, կե-
տեր, վորոնք համապատասխան են, ըստ իրենց բարձրութան,
հերթականորեն կանֆորկայի վերին մակարդակին, վերին ողակի
արտաքին ու ներքին մակարդակին, հետևյալ ողակի արտաքին-
ներքին մակարդակին և այլն, մինչև վերջին ողակի ներքին
մակարդակը: Այդ բոլոր կետերի վրայով գծում ենք հորիզոնա-
կան գծեր և նրանց վրա a, b, v, r, d կետերի յերկու կողմերից
նշանակում ենք արտաքին արտադրի կետերը կամ այդ ողակի
շառավիղները: Այդ կետերը միացնելով և մի ողակից մյուսն
անցնելիս սահուն միացումներ կատարելով՝ կառանանք կանֆոր-
կայի արտաքին տեսքն առջևի կողմից:

Հորիզոնական պրոյեկցիան կներկայացնի մի շարք համա-
կենտրոն շրջանագծեր: K Պ գծի վրա, գտնում ենք այն կետը,
վորը հանդիսանում է կանֆորկայի յերկրաչափական առանցքի
հորիզոնական պրոյեկցիան a a' շառավիղով գծում ենք շրջանա-
գիծ, վորը պատկերացնում է վերին ողակի արտաքին մակերեսի
հորիզոնական պրոյեկցիան: $\frac{1}{2}$ միլիմետրով փոքր շառավիղով
(կամֆորկայի պատերի հաստությունը հավասար է 1 միլիմետրի)
գծում ենք համակենտրոն մի ուրիշ շրջանագիծ և ստանում
վերին ողակի ներսի մակերևույթի հորիզոնական պրոյեկցիան:

Հորիզոնական պրոյեկցիայի վրա
երևում են բոլոր մյուս ողակների
ներքին մակերևույթները, վորոնք
պատկերացվում են իբրև համակենտ-
րոն շրջանագծերը: Այս շրջանագծերը
մեկ միլիմետր ավելի փոքր արտա-
գծեր ունեն քան արտաքին մակերե-
վույթները պատկերացնող շրջանա-
գծերը (տես նկար 16):


Ստացված գծագրերը բավարար
ովյալներ են տալիս կանֆորկա պատ-
րաստելու համար:

Գծագրի վրա մոտ լինելու պատ-
ճառով յերկու գծերը ձուլվել են:

Որինակ 3-րդ.—


Տալ տարուբետակայի պրոյեկցիաները:
Առաջին խնդրի մեջ արծարծված մոտիվների համաձայն մաս-
շտար ենք վերցնում իսկական չափի $\frac{1}{10}$ և նշանակում ենք ներ-
քևի աջ անկյունում: Տարուբետական դնում ենք այնպես, վոր
նստելու հարթությունը հորիզոնական լինի և նրա ուղղաձիգ
կողմերից մեկը, որինակ՝ A B B Γ կողը (ձև № 17) լինի զուգա-
հեռ դեպի յերևակայած ուղղաձիգ պրոյեկցիայի հարթությունը:

Համաձայն յերրորդ թեորեմայի այդ կողը, ինչպես նրան
զուգահեռ D E Յ Ջ և H K M Ու մյուս կողերը կտան իրենց ուղ-
ղաձիգ պրոյեկցիան համանման ձևով և, վորովհետև մենք նա-
խագծում ենք իսկական մեծության $\frac{1}{10}$ չափով, ապա և ստացած
պրոյեկցիայի չափերն իսկականից 10 անգամ փոքր կլինեն: Նախ
գծենք A B B Γ ուղիղ անկյունու ուղղաձիգ պրոյեկցիան: Նստե-




Ձև 17.


լատեղիի մի կողմը հավասար է 40 cm. իսկ տախտակի հաստութունը հավասար է 1 cm., PC առանցքի ո՛ր ազատ կետից դնում ենք K Պ հորիզոնական գիծ, վորի յերկարութունն առանցքի յերկու կողմից հավասար է 20 cm.:




Ձև 18.



Ձև 19.



Ձև 20.



Ձև 21.

Մտացած a' և b' կետերից գծում ենք յերկու ուղղաձիգ գծեր՝ $a'b'$ և $b'g'$ ամեն մեկը 1 cm. հավասար՝ ըստ մասշտաբի՝ $M. B'$ և g' ծայրերը միացնում և ստանում ենք $a'b'g'$ ուղղան-

կյունանին, վորը ներկայացնում է նստելատեղիի ուղղաձիգ պրոյեկցիան կամ ֆասադը (ձև 18): B' ծայրից դեպի $a'z$ և g' դեպի $աա$ 4 cm. հավասար մեծութուն նշանակելով ստանում ենք D և K կետերի ուղղաձիգ պրոյեկցիաները, — D' և K' , վորից հետո սկսում ենք գծել վորտեղի առաջի կողմի ուղղաձիգ պրոյեկցիաները:

Վտաները քառակուսի կտրվածք ունեն և 50 cm. յերկարութուն, իսկ ներքևից 7 cm. բարձրության վրա բարակացած են (տես ձև 18): Վտաներն ամրացված են 1,5 cm. հաստության և 8 cm. լայնության միացնող պլանկաներով: Վերին և ներքին պլանկաների միջև յեղած տարածությունը հավասար է 31 cm.: Ինչպիսիք բոլոր չափերը նշանակվում են տարուրետակալի ուղղաձիգ պրոյեկցիայի համապատասխան տեղերում, ըստ նախորոք գծված գծային մասշտաբի ուղղաձիգ պրոյեկցիայի վրա յերևում են վերին և ներքին պլանկաների շիպերի ծայրերը, վորոնք տեղավորված են ուղղահայաց կերպով գծադրի հարթության վրա:

Պրոյեկցիայի ուղղաձիգ հարթության վրա ուղղահայաց դասավորված են վերին պլանկաների, վորոնց շիպերը կտրված են վերևի կողմից:


Ինչ վերաբերում է ներքևի պլանկաներին, վորոնք ուղղահայաց կերպով են տեղավորված դեպի պրոյեկցիայի ուղղաձիգ հարթությունը՝ գտնվում են դեպի այդ հարթությունը զուգահեռ կերպով տեղավորված պլանկաներից բարձր, մի պլանկի հաստության տարածության չափով: Շիպերի յերևացող ծայրերը պետք է գծվեն ուղղաձիգ պրոյեկցիայի վրա, համապատասխան մասշտաբով և համապատասխան տեղերում:

Պարզ է, վոր ուղղաձիգ պրոյեկցիա գծելու համար հարկավոր է սկզբից նշանակել ո՛ր p' c' t' y' և q' և մեկը մյուսից 1 cm. 8 cm., 31 cm., 4 cm. և 7 cm. տարածության վրա $1/10$ մասշտաբով և գծել մի շարք հորիզոնական գծեր, վորոնց վրա առանցքի այս և այն կողմը նշանակվում են համապատասխան չափեր:

Անցնենք հորիզոնական պրոյեկցիայի գծադրմանը (ձև № 19): O կետն ընդունում ենք տաքուրետակալի հորիզոնական պրոյեկցիայի առանցքների կենտրոն դեպի վեր և ներքև ուղղաձիգ առանցքային գծի վրա նշանակում ենք $O H$ և $O U$ չափերը, վորոնք հավասար են ըստ մասշտաբի, նստելու քառակուսու կողմի $1/2$ -ին կամ 20 cm. H և U կետերով գծում ենք հորիզոնական

գծեր սուանցքի շուրաքանչյուր կողմից 20 սմ. յերկարութեամբ: Ստացված 3 10 6 a ձևն իրենից ներկայացնում է նստելատեղիի հորիզոնական պրոյեկցիան:

Հաճախ այլ կերպ են վարվում: a' և b' կետերից ուղղաձիգ գծեր են տանում մինչև հորիզոնական գծերի հետ հասակելը, վորոնք գծված են H և II կետերից նախորդ ձևով և ուղղաձիգ պրոյեկցիայի ճիշտ տակը: 3, a, 10, 6 հատման կետերը կտան նստելու քառակուսու հորիզոնական պրոյեկցիայի գազաթիւերը: Ստուգում՝ a 3=3 10=10 6=a 6



Ձև 22 և 23.

Նստելատեղիի անթափանցիկ լինելու պատճառով թվում է, վոր տվյալ տարուրետկայի բնականից գծագրելու շախատանքը կարելի չէ վերջացած համարել, բայց ստուգելով ստացված գծագիրը տեխնիկական գծագրման պահանջների տեսակետից, մենք տեսնում ենք, վոր այս գծագիրը չի տալիս այն բոլոր տվյալները, վորոնք հարկավոր են տարուրետկայի կառուցման համար: Ստացված լերկու պրոյեկցիայի հիման վրա՝ մենք ճշտութեամբ կարող ենք կառուցել նստելու քառակուսին, վորովհետև նրա բոլոր չափերը հնչտութեամբ կարող ենք վորոշել նրա պրոյեկցիայի վորևէ գծի չափումը գծային մասշտաբի հետ համեմատելով:

Ինչ վերաբերում է վոտերին, նրանց առջևի տեսքը հեշտ է վորոշել բաց ինչպիսին է նրանց հաստութունը, նրանց գասավորումը մենք միայն մեր պրոյեկցիաներով չենք կարող իմանալ, այլ պետք է միայն լինթագրենք, կարելի չէ լինթագրել, վոր

վոտերը դասավորված են քառակուսու գազաթիւերին և նրանց տեսքը կողքից նույնն է, ինչ վոր առջևից, բայց գծագրի վրա այդ մասի տվյալները չկան:

Գծագրի վրա նմանապես չի լերկում վերի և ներքի պլանկաների հաստութունը, ուղղաձիգ պրոյեկցիայի վրա լերկում են միայն շրպերի ծայրերը, բաց վերջիններս իրականում կարող են ավելի բարակ լինել: Գծագրված տարուրետկայի պրոյեկցիաների այդ բացերն հետևանք են այն բանի, վոր մենք չենք պատկերացրել մեզ հետաքրքրող ամեն մի գծի կամ ձևի յերկու պրոյեկցիան:

Ա. կետը պատկերացնում է լերկու ձախ վոտերի վերին ձախ անկյունների գազաթիւերի ուղղաձիգ պրոյեկցիան, սակայն մենք չունենք այդ ձախ վոտերի վոշ մի հորիզոնական պրոյեկցիան:

Նույնը կարելի չէ ասել աջ վոտերի վերաբերյալ: Այդպիսով մենք տեսնում ենք, վոր շատ կետերի, նույնպես և գծերի պրոյեկցիաները, որինակ՝ յերկու ձախ կամ աջ վոտերի վերին ձախ կողմի, ստացել ենք միայն մի հարթութեան վրա, իսկ մի պրոյեկցիան չի կարող ընտրուել կետը, գիծը կամ ձևը:

Մենք չենք ավել յերկրորդ պրոյեկցիան այն լրիվ պատճառով, վոր մենք նախագծել ենք տարուրետկայի միայն արտաքին տեսքը և այդ տեսքով ծածկված ներքին մասերը տեղ չեն գտել եպլուրի վրա:


Այդ ձևի նախագծումից բխող թերութունները վերացնելու համար զործադրվում են այլ լրացուցիչ պրոյեկցիաներ, վորոնց մասին կխոսենք ներքևում:

§ 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊՐՈՅԵԿՑԻԱՆԵՐ


Տեխնիկական գծագրութեան տրամադրութեան տակ բազմաթիվ միջոցներ կան, վորոնցով նա կարողանում է լրիվ կերպով բավարարել այն բոլոր հարցերին, վորոնք ծագում են տեխնիկի մտքում պատկերացվող առարկայի մասին լրիվ տվյալներ ունենալու համար: Որինակ՝ առարկայի ձևի, չափերի, փոխադարձ տեղավորման, նյութի մասին և այլն:

Այդ միջոցներից մեկն առարկայի մյուս տեսքերի գծագրումն է, վորը կարող է լրացուցիչ տեղեկութուններ տալ նրա ձևի և

Հափերի մասին: Տարբերակայի նախագծման ժամանակ տվինք միայն նրա տեսքն անջից և վերևից, բայց փոխանակ տարբու-




Չկ 24.



Չկ 25.

րետկայի հորիզոնական պրոյեկցիան վերից վար նախագծելու կարելի չի նախագծել վարից վեր: Այդպիսի պրոյեկցիան կրավարարեր համարյա բոլոր վերևում բերված հարցերին (տես ձև 20): Այդ պրոյեկցիայի վրա լերևում են վտտերի դասա-




Չկ 26.

վորությունը, նրանց հաստությունը ընդհանրապես և ցածում բարակացրած մասի հաստությունն, միացնող պլանկների հաստությունը և այլն: Տեսքը վարից ընդհանրապես տեղավորում են համապատասխան ուղղաձիգ պրոյեկցիայի վերևը: Հաճախ պակասող տվյալները լրացնելու համար, չեն բավականանում միայն առարկայի տեսանելի ուրվագծերը պատկերացնելով այս կամ այն կողմից. որինակ, № 22 ձևի վրա պունկտիրով (գծիկներ) ցույց է տրված վտտերի դասավորումը, պլանկների հաստությունը, վերին պլանկների ներս մասը մասի հաստությունը և խորությունը շիպերի հաստությունը և այլն (տես ձև № 23): Յերբեմն, ինչպես նաև ներկա դեպքում կարելի չի գործի համար մեծ հաշվողությամբ պատկերացնել տալ տարբերակայի նախագիծը՝ նստելու հարթությունը վերցրած (տես 23 ձև):

կարելի չի տալ նաև կողային տեսքը կամ պրոֆիլի պրոյեկցիան:

§ 6. Տեսքը կողից (պրոֆիլ պրոյեկցիա)


Կողային տեսքի տակ յենթադրում են առարկայի պրոյեկցիան այնպիսի հարթության վրա, վորն ուղղահայաց է և՛ դեպի պրոյեկցիայի ուղղաձիգ հարթությունը և՛ դեպի հորիզոնական հարթությունը: Այդ հարթությունը յենթադրվում է առարկայի աջ կամ ձախ կողմում, իսկ նախագծող ճառագայթները զալիս են դեպի նա ուղղահայաց կերպով: Ստացված պրոյեկցիան, վոր կոչվում է պրոֆիլ, հորիզոնական պրոյեկցիայի հարթության




Չկ 27.

հետ տեղավորվում է հետևյալ կերպ: Պրոֆիլ հարթությունը պատում են նրա և ուղղաձիգ հարթության հատման գծի շուրջը նախագծող ճառագայթների ուղղությամբ, մինչև վերջինիս հետ տեղավորվելը և այնուհետև նրա հետ միասին, ինչպես ասված է վերևում, մինչև պրոյեկցիայի հորիզոնական հարթության հետ տեղավորվելը: Այստեղից պարզ է, վոր չեթե պրոֆիլ հարթությունը կգտնվի առարկայի աջ կողմը նրա՝ կողային կամ պրոֆիլ պրոյեկցիան կըտեղավորվի ուղղաձիգ պրոյեկցիայի կամ ֆասսադի աջ կողմը: Յեթե պրոֆիլ հարթությունն առարկայի ձախ կողմն է տեղավորված, ապա պրոֆիլ պրոյեկցիան կըտեղավորվի ձախ կողմը: Միանգամայն պարզ է, վոր համաձայն նախագիծման որեւի կետի պրոֆիլ և ուղղաձիգ պրոյեկցիաները

եպյուրում պետք է լինեն մի ուղիղ գծի վրա, վորն ուղղահայաց
 և դեպի հարթությունների հասման գիծը:



Ձև 28.



Ձև 29.

Յերկաթուղու ուղիղ գծագրերը ցույց են տրված № 24 և 25
 ձևերի վրա, 24 ձևի վրա, ցույց է տրված ուղիղ պրոֆիլը:

ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3.

§ 7. ԿՏՐՎԱԾ ՔՆԵՐ

Մեծ մասամբ, առարկայի արտաքին ուղղագծերը պրոյեկ-
 ցիաները նույնպես և առարկայի արտաքին չափումը բավականին
 տվյալներ չեն տալիս մեզ հետաքրքրող առարկան կառուցելու
 կամ նորոգելու համար, այդ պատճառով դիմում են այսպես կոչ-
 ված կտրվածքների (разрезы) ուղևության: Այդ լինում է այն-
 դեպքում, թերը ուզում են ցույց տալ առարկայի պատերի հաս-
 տությունը, նրա ներքը գտնվող մասերի զանազան չափերը,
 նյութը, վորից պատրաստված են այդ մասերը: Այդ դեպքում
 պատկերացնում են, վոր առարկան կտրված է մի վորևե հար-
 թությունով և այն մասերը, վորոնք չեն յերևում պրոյեկցիաների
 վրա, բայց ցույց են տված կտրվածքում:

Ինքնին պարզ է, վոր կտրվածքի հարթությունն ընտրում
 են այնպես, վոր հասման գծերը, կտրվածքը, կարողանա բա-
 վական լրիվ կերպով պարզել մեզ հետաքրքրող չափերի մեծու-
 թյունը և մասերի դասավորումը: Որինակ՝ ջրմուղու թուղե խո-
 զովակների (раструбы) բոլոր չափերը և արձիճե լիցքի ձևն ու
 մեծությունը ցույց տալու համար, պատկերացնում են կտրված
 հարթությունով, վոր անցնում է նրանց յերկրաչափական ա-
 տանցքով և հասումը նախագծում են նրան զուգահեռ հարթու-
 թյան վրա:

Սովորաբար յենթադրում են, վոր հասման հարթությունը,
 վորն անցնում է խողովակների յերկրաչափական առանցքով
 զուգահեռ և դեպի պրոյեկցիայի ուղղածիգ կամ հորիզոնական
 հարթությունը:

Մանրություն.— Գլանաձև և գնդաձև մարմիններն իրենց ա-
 տանցքով անցնող վորևե հարթությունով հատվելիս միշտ տալիս
 են միաձև կտրվածք:

Առաջին դեպքում նախագծում են պրոյեկցիայի ուղղածիգ
 հարթության վրա, իսկ յերկրորդ դեպքում՝ հորիզոնական հար-
 թության վրա: Այդպիսի կտրվածք պատկերացված է № 27 ձևի
 վրա: Այդ գծագրի վրա շատ պարզ կերպով յերևում են խողո-
 վակների և մանր խողովակների ներքին ու արտաքին արամա-
 գծերը, պատերի հաստությունը, խորությունը, միացման խորու-
 թյունը, արձիճե լիցքի ներքին հաստացումը, խողովակների
 ծայրամասերի հաստությունը, և այլն: Նկատի ունենալով այն,
 վոր մենք գործ ունենք պտտման մակերևույթի հետ, միայն
 հասման մի պրոյեկցիան միանգամայն կարող է բավարար
 լինել մեր պահանջների համար: Յեթե ճարտարապետն ուզում է
 սենյակների, աստիճանների, պատուհանների և դռների դասավո-
 րումը ցույց տալ, նախագծվող տան հատումը տալիս է այնպիսի
 հարթությունով, վորը զուգահեռ է հորիզոնական պրոյեկցիայի
 հարթությանը և գտնվում է պատուհանի գոգից (подаконик)
 վորոջ բարձրության վրա: Յեթե կտրվածքը տարված է առաջին
 հարկով, ապա նրա հորիզոնական պրոյեկցիան կրչվում է առաջին
 հարկի հատակագիծ կամ «план»: Այստեղ միանգամայն պարզ
 կերպով նշանակում են առաջին հարկի բաժանումը բնակա-
 րանների, սենյակների, աստիճանների դասավորումը և հորի-
 զոնական չափերը, դրսի և ներսի պատերի հաստությունը, պա-
 տուհանների և դռների դասավորումը, լույսարանի արտաքնոցի,

խոհանոցի, պլիտայի, վառարանների դասավորումը և այլն: Յնթե տարբեր հարկերում սենյակները տարբեր կերպով են դասավորված, ապա տալիս են կտրվածքների պրոյեկցիաներն ըստ հարկերի: Զանազան հարկերի սենյակների բարձրությունը, հատակի հաստությունը, աստիճանների չափերի և մյուս մասնամասնությունները ցույց տալու համար գծում են շնչի ուղղաձիգ կտրվածքը, վորը զուգահեռ է լինում դեպի Փասադի կամ պրոֆիլի հարթությանը նույնիսկ այն հանգամանքին, թե այդ կտրվածքներից, վորն և ավելի լրիվ ավյալներ տալիս շնչը կառուցելու համար, իսկ հաճախ լերկուսը միասին՝ Փասադը և պրոֆիլը: Առարկայի յատկազգծի վրա պայմանական գծով ցույց են տալիս թե վորտեղով է անցնում կտրվածքի հարթությունը, իսկ գծագրի վրա գրում են կտրվածքն այս ինչ գծով: Յնքեմն մեծ քանակությամբ զանազան դետալներ պատկերացնելու համար կտրվածքն անց են կացնում բեկյալ գծով. որինակ № 23 ձևի վրա, № 18 ձևի Փ X Ա գծով:

Շնորհիվ այդպիսի կտրվածքի մենք միանգամից տեսնում ենք առջևի վտանների միացումը պլանկների հետ, վորոնք ուղղահայաց են դեպի գծագիրը և զուգահեռ նրան: Կտրվածքները սովորաբար բաժանվում են յերկու տեսակի՝ ուղղաձիգ և հորիզոնական: Առաջինն իր հերթին բաժանվում է ընդլայնականի և ընդլերկայնականի: Առանձին դեպքերում պահանջվում են կտրվածքներ այլ հարթություններով, բայց այդ դեպքում ևս հատուկը նախագծվում է նրան զուգահեռ հարթության վրա:

Այն դեպքում, յերբ մարմինը սիմետրիկ հարթություն է ունենում, հաճախ միայն մարմնի մի մասն են ցույց տալիս կտրվածքում, իսկ մյուս մասի արտաքին տեսքն են ցույց տալիս, այդ խնայում է ժամանակը, աշխատանքը և տեղը:

§ 8. ԸՆԴԱՆՈՒՄ ՏԵՍԻԸ ՅԵՎ ԴԵՏԱԼՆԵՐԸ

Բարդ առարկաներն իսկականից նախագծելու ժամանակ հարմարություն և պարզություն ստեղծելու համար կարիք է լինում աշխատանքը բաժանել յերկու մասի: Մի կողմից տալիս են մի ամբողջ հավաքական պրոյեկցիա, իսկ մյուս կողմից առանձին այս կամ այն մասերի պրոյեկցիաներ և կամ բոլոր մասերի պրոյեկցիաներն առանձին—առանձին:

Առաջին դեպքում մենք կոչում ենք ընդհանուր տեսքի պրո-

յեկցիա և տե՛սնում ենք առարկայի գլխավոր մասերի դասավորումն ու այսպես կոչված առարկայի գլխավոր չափերը: Յերկրորդ դեպքում մենք տեսնում ենք առարկայի վորևե մասի պրոյեկցիան կամ ինչպես ասում են դետալի պրոյեկցիան, այնպիսի մասշտաբով և այնքան լրիվ, վոր կարելի լինի իրականում հեշտությամբ կառուցել այդ առարկան: Այնպիսի պարզ առարկայի պրոյեկցիան, ինչպիսին է № 17 և 13 ձևի վրա պատկերացված տաբուրետայինը, կարող է բացատրել մեր ասածները: Իսկպես ^{1/10} մասշտաբ և բազմաթիվ պունկտիբային գծեր ունենալով շատ դժվար է դժային և նույնիսկ թվական մասշտաբով ճշտությամբ վորոշել շրպերի ու բնբրի չափերը, նմանակա և միացնող պլանկների հաստությունը, բայց յեթե պլանկների և վտերի միացումն ավելի մեծ մասշտաբով առանձին պատկերացնենք (որինակ ^{1/5} մասշտաբով, վոր պատկերացված է № 28 և 29 ձևերի վրա) այն դեպքում նրա չափերը հեշտությամբ կարելի յե վորոշել:

Այդ ավելի ուժեղ կերպով նկատվում է շատ բարդ առարկաների պրոյեկցիաների դեպքում, վորտեղ առանձին դետալի մասերը գծագրելուց չի կարելի խուսափել:

Յերբեմն վորևե բարդ մեքենայի կամ շոգեշարժի գծագիրը տալու համար մի թերթի վրա գծում են նրա ընդհանուր տեսքը, իսկ նրա դետալները զբաղեցնում են 40—50 և ավելի թերթեր: Առանձին գծում են գործընթաց գլանների, նրանց կափարիչների, մխոցներն, շոգեբաշխ արկղի, կոլոսնիկի ցանցի, հնոցի դոնակների և այլ մասերի դետալները:

Բազմահարկ տան գծագիրը նույնպես կարող է բազմաթիվ թերթեր զբաղել: Գծագրում են նրա արտաքին տեսքը (Փասադը և պլանը), այնուհետև նրա ընդլայնական և ընդլերկայնական կտրվածքները, աստիճանների, պատերի դասավորումը և այլ դետալները: Ընդհանուր տեսքի համար վերցնում են փոքր մասշտաբ այն նկատառումով, վոր մեզ հետաքրքրող առարկան կարելի լինի պատկերացնել մի թերթի վրա զանազան պրոյեկցիաներով: Բոլորովին այլ են գծագրի դետալները, նրանց համար վերցնում են մեծ մասշտաբներ՝ ^{1/5}, ^{1/4}, ^{1/3}, ^{1/2} և նույնիսկ ^{1/1}, այսինքն իսկական չափով, հազվագույն դեպքում դետալները հասարակ են և միատեսակ: Որինակ՝ յերկտավրային բալկան գծելիս բավարարվում են ^{1/10} մասշտաբով:

§ 9. ՉԱՓԵՐԻ ՅԵՎ ԼՅՈՒԹԵՐԻ ԼՇՁՆԱԿՈՒՄԸ

Ինչպես մենք տեսանք ախտիկական գծագրութիւնը շատ քիչ բացառութեամբ տալիս եւ առարկայի պրոյեկցիան փոքրացրած վորոշ մասշտաբով: Վորպեսզի այդ պրոյեկցիաների հիման վրա կարողանանք կառուցել կամ պատրաստել առարկան հարկավոր եւ նախապես պարզել նրա իսկական չափերը, իհարկե զժվար չե վորոշել թե ինչ մասշտաբով են գծված այդ պրոյեկցիաները: Բավական եւ առարկայի պրոյեկցիայի այս կամ այն գիծը չափել և ստացած գիծը մեծացնել այնքան անգամ, վորքան անգամ մենք պրոյեկցիան փոքրացրել ենք առարկայի իսկական չափերի համեմատ, կամ բազմապատկել մասշտաբի հալտարարով, յեթե վերջինս կտտրակ եւ միավոր համարիչով: Այլեւի պարզ կլինի յեթե կարկինով վերցրած մեզ հետաքրքրող գծի չափը դնենք գծագրի վրա վերցրած, գծային մասշտաբի վրա: Վերջինս ցույց կտա համապատասխան գծի իսկական չափը (տես «գծային մասշտաբ» գլուխը): Այդ միջոցը սովորաբար դործ եւ անվում աշխարհագրական և հողաչափական քարտեզներ և յերբեմն ճարտարապետական գծագրեր կարդալու համար: Մի կողմից մի քանի շինարարական, մասնավորապես մեքենաշինարարական գծագրերի վրա, ավելի ճիշտ չափերն ստանալու, մյուս կողմից տեխնիկի կամ բանվորի աշխատանքը թեթևացնելու համար, ընդունված ե պրոյեկցիաների վրա նշանակել առարկաների իսկական չափերը (տես 19, 24, 27 և 28 ձևերը):

Այդ արվում ե հետևյալ կերպ. տարուրետկայի վտտի հաստութիւնը ցույց տալու համար նրա ուղղաձիգ պրոյեկցիայի վրա գծում են հորիզոնական պունկտիրային կամ գունավոր գիծ, սլաքներով վերջացող. սլաքների սուբ ծայրերը պետք ե դուրադիպեն չափվող ուղիղ գծի վերջավորութեան հետ: Այդ կետերի մեջ ուղիղ գծի վրա (տես 23 ձև) կամ նրա ընդհատված տեղը (տես ձև № 18) չափող գծին ուղղահայաց կերպով գրում են առարկայի համապատասխան գծի իսկական չափը: Եթե գծագրի համապատասխան տարածութիւնը փոքր ե և իր վրա չի տեղավորում չափադիծը, ապա պունկտիրային կամ գունավոր գծերը շարունակում են գծվածքից դուրս և այնտեղ նշանակում չափը (տես ձև 18 նստելու հարթութեան հաստութեան չափը):

Չափերը գրում են բոլոր պրոյեկցիաների վրա, վորովհետև



միայն մի պրոյեկցիան չի կարող լրիվ կերպով ցուցաբերել առարկայի կամ նրա մասերի բոլոր կողմերը:

Բացի առարկայի բոլոր մասերի չափերն իմանալուց, առարկան պատրաստելու համար հարկավոր ե իմանալ թե ամեն մի մասն ինչ նյութից ե պատրաստված կամ պիտի պատրաստվի: Այդ տեղեկութիւնը նույնպես գծագիրը պետք ե տա: Այդ բանի համար ոգտվում են յերկու միջոցով, առաջին՝ պրոյեկցիայի համապատասխան տեղերը պայմանավորված գունով ներկելով և յերկրորդ՝ համապատասխան շարիխով կալով: Առարկայի արտաքին տեսքի պրոյեկցիայի վրա շտրիխով կամ ներկում չի կատարվում, այլ կատարվում ե միայն կտրվածքների պրոյեկցիաների վրա: № 30 ձևի վրա ցույց են տրված պայմանական ներկումները և շտրիխով կան: Մեր աղյուսակի վրա համապատասխան վանդակները չեն ներկված, բայց վրան գրված ե թե ինչ գույնով պիտի ներկվի:

§ 10. ԳԾԱԳՐԵՐԻ ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՉԵՑԹԱՆ ՄԻ ԳԱՆԻ ԶԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Առարկայի այս կամ այն դետալի, իսկ յերբեմն ամբողջ տեսքի նախագծման ժամանակ, յերբ դետալը կամ ամբողջ առարկան միևնույն ուղղութեամբ միատեսակ տեսք ունի, ապա այդ դեպքում նրա պրոյեկցիաներից մի քանիսը լրիվ գծված դրութեամբ վոչ մի լրացուցիչ տվյալներ չեն տալիս առարկայի մասին, այլ միայն տեղ են գրավում թղթի վրա: № 27 ձևի վրա իրար միացած ջրմուղու թուղի յերկու խողովակների գծագրի վրա պարզ կերպով յերևում ե, վոր յեթե խողովակն ամբողջ յերկարութեամբ գծենք մասշտաբով, միայն ավելորդ տեղ կգրադեցնի և նույնիսկ թղթի վրա չի տեղավորվի ու նոր տվյալներ չի կարող տալ բացի մեր թերթի վրայի փոքրիկ գծվածքի տվյալներից:

Այդպիսի դեպքերում գծում են միայն առարկայի վոչ միատեսակ մասը և ապա միատեսակը, վերջինիս վրա մի փոքր մասը գծելուց հետո, կարծես կտրում են մի կողմից կամ յերբեմն յերկու կողմից և գծում նրա ծայրերի պրոյեկցիաները: Եթե նախագծում են այնպիսի առարկաներ, վորոնք իրենց յերկարութեան վրա միևնույն կտրվածքն ունեն, որինակ՝ ռեխերը, ձողերը և այլն, բավականանում են միայն գծագրի յերկու ծայրերն իրար մոտ գծելով: Գծվածքի չափման գծի վրա նետաձև նշանակումները



Ձև 30. Նյութերի պայմանական նշանների ուղյակատի

ցույց են տալիս առարկայի իսկական չափերը՝ հիշված ուղղութեամբ: Մենք այդպես ենք վարվել խողովակների պրոյեկցիաները գծելիս (ձև № 27): Այդպես պեժք է վարվել բոլոր նման դեպքերում:

Առարկան յերկու պրոյեկցիաներում պատկերացնելու ժամանակ, չերբեմն առարկայի ուղղանկյան կամ զուգահեռանիստ մասը և կոր մասը տալիս են պրոյեկցիայի միևնույն հարթության վրա միևնույն պրոյեկցիան: Որինքով՝ քառակուսի հիմք ունեցող ուղիղ զուգահեռանիստը և գլանը, վորի արամագիծը հավասար է քառակուսու հիմքի մի կողմին և ունեն միմյանց զուգահեռ չերկրաչափական առանցքները, — հարթության վրա տալիս են միանգամայն միատեսակ պրոյեկցիաներ: Թեպետ առարկայի և կամ նրա վորոշ մասի իսկական ձևը մյուս պրոյեկցիաների վրա հեշտութեամբ կարելի չէ վորոշել, բայց և այնպես գծագրի կարգալը հեշտացնելու համար, չեթե առարկայի զուգահեռանիստային մասն է պատկերացվում, ընդունված է նրա նիստերի վրա անկյունագիծ անցկացնելը:

§ 11. ԳԾԱՅԻՆ ՄԱՍ ԵՏԱԲ

Մենք արդեն ասել ենք, վոր մասշտաբի տակ հասկանում ենք գծվածքի վորոշ մշտական հարաբերությունը, դեպի տարածության մեջ վերցրած համապատասխան գծի պրոյեկցիան. տեխնիկական գծագրերի վրա այդ շատ հաճախ նշանակում է գծվածքի վորոշ գծի հարաբերությունը դեպի տարածության համապատասխան գիծը:

Վորպեսզի վորևե առարկայի գծագրման համար կամ գծվածքը կարդալու համար վորևե չափ դտնել ամեն անգամ չհաշվեն, սովորաբար ոգտվում են գծային մասշտաբով, վորը հենց գծագրի վրա տրվում է: Գծային մասշտաբները լինում են ընդհերկայնական և ընդլայնական: Նրանցից ամենազործածականն առաջինն է, վորը գծվում է հետևյալ կերպ: Գծագրի վրա սովորաբար ներքևի աջ անկյունում գծվում է ուղիղ հորիզոնական գիծ, վորի վրա մի քանի հավասար բաժանումներ են կատարում, այդ ներկայացնում է իսկական չափերի միավորը մեծացրած կամ փոքրացրած այնքան անգամ, վորքան այդ պահանջվում է ընտրած մասշտաբով: Մեր № 1 որինապը մենք գծագրել ենք $\frac{1}{10}$ մասշտաբով: Այդ նշանակում է, վոր գծագրի վրայի ամեն

մի mm համապատասխանում է մեկ cm. Այդ պատճառով հիշված ուղիղ գծի վրա նշանակում ենք (ձև № 31) մի քանի բաժանումներ, ամեն մեկը մի cm. հավասար: Առաջին բաժանումի աջ ծայրին նշանակում ենք 0 թիվը, այնուհետև 0-ից աջ նշանակում ենք 1, 2, 3 և այլն և վերջին թվանշանի մոտ նշանակում ենք իսկական չափի անունը, ներկա դեպքում cm. 0-ից մինչև 1, 1—2, 2—3 հատվածները, մեր ընտրած մասշտաբով կը պատկերացվեն գծեր, վորոնք իրականում հավասար են 1 դեցիմետրի: Ավելի փոքր չափեր հաշվելու համար առաջին բաժանումը իր հերթին բաժանում են 10 հավասար մասերի (վորովհետև 1 դեցիմետրը հավասար է 10 սանտիմետրի), վորոնցից ամեն մեկը հավասար է 1 սանտիմի (իսկական չափը) և հաշվումը կատարվում է 0-ից դեպի ձախ և վերջին թվանշանի մոտ ձախ կողմից դրում են ամենափոքր թվանշանի անունը, ներկա դեպքում սանտիմետրը:



Ձև №31 Մասշտաբ.

Յեթե թվանշանը մետր լիներ, գծային մասշտաբի ամեն մի բաժինն իրականում կհամապատասխաներ մի մետրի, մենք առաջին մասը կբաժանելինք 10 հավասար մասի, յեթե ուզեցինք ավելի փոքր չափերը դեցիմետրներով վորոշել և կամ 100 մասի, յեթե սանտիմետրով չափեցինք: Իսկ 0-ից դեպի ձախ առաջին բաժանումը (վորի վրա մանր բաժանումներ կան) համապատասխան է մեկ սանտիմետրի, ապա պարզ է, վոր 0-ից դեպի աջ խնդրի պահանջած զանազան հաշվումներ կատարելու համար բավական է նշանակել միայն մի բաժանում: Մասշտաբի կառուցման միջոցից յերևում է, վոր նրա ամբողջ ողորակար յերկարութունը պիտի այնքան հավասար ու հիմնական բաժանումներ ունենա, վորպեսզի նրանց գումարը մասշտաբով հավասար լինի, կամ մի քիչ ավելի լինի պատկերացվող առարկայի չափերից: Այդպիսով ուրեմն 0-ից դեպի աջ մենք միշտ մի բաժանումով պակաս ենք նշանակում, քան այդ պահանջում է պատկերացվող առարկայի ամենամեծ չափումը: Ավելի հեշտ չափման համար մասշտաբի բաժանումների վրա կարճ ուղղաձիգ գծեր են գծում ավելի փոքր բաժանումների կամ ստորաբաժանումների համար գծում են ա-

վելի կարճ: Յեթե մասշտաբի առաջին բաժանումը բաժանվում է կետերի, $\frac{1}{5}$, $\frac{1}{10}$ և այլն, ապա համապատասխան ուղղաձիգ գծերը նույնպես գծվում են զանազան չափերի (տես № 34):

Մասշտաբով ոգտվում են հետևյալ կերպ՝ առաջին դեպքը գծելիս, յեթե հարկավոր է մի քանի ամբողջ ս|մ նշանակել, կարկինի մի վորտի ծայրը դնում են 0 կետի վրա, իսկ մյուս վորտի ծայրը մասշտաբի վրա 0-ից դեպի աջ կողմն այն կծիկի վրա, վորտեղ նշանակված է պահանջված թիվը: Յեթե հարկավոր էլինում նշանակել մի քանի դեցիմ. cm. հետ միասին մի վորտի ծայրը դնում են դեցիմետրի ամբողջ թվին համապատասխանող կետի վրա, իսկ մյուս ծայրը տանում են դեպի ձախ և դնում բաժանման այն կետի վրա, վորը համապատասխան է cm. տվյալ քանակին: Յերկրորդ դեպքը—գծագրեր կարգալիս ընդյերկայնական գծային մասշտաբով ոգտվում են հետևյալ կերպ՝ գծագրի վորտե գծի չափումը վերցնելով կարկինի մի վորտի ծայրը դնում են 0 կետի վրա, իսկ մյուսն առանց կարկինի վորտերը շարժելու մասշտաբի գծի վրայով տանում են դեպի աջ: Յեթե մյուս վորտի ծայրն ընկնում է բաժանման կետի դիմաց, ապա մյուս վորտի ծայրն ընկնում է ավելի ցույց է աալիս ամբողջ դեցիմետրի քանակը, վորը համապատասխան է վերցրած իսկական գծին: Հսկանակ դեպքում, յեթե յերկրորդ վորտի ծայրն ընկնում է յերկու բաժանումների մեջտեղը, կարկինը վերցնում են, յերկրորդ վորտի ծայրը տեղավորում են ձախ կողմը գտնված ամենամոտ բաժանումի վրա, իսկ առաջին վորտի ծայրն առանց շարժելու տանում են դեպի ձախ: Կարկինի յերկրորդ վորտի ծայրը ցույց կտա դեցիմետրի ամբողջ քանակը, իսկ ձախինը սանտիմետրի:



« Ազգային գրադարան



NL0308108

